

ՊՆԹԶ—Պ. Սևակ, նորից քնն հետ, Երևան, 1954

ՊԱՄԱՄ—Պ. Սևակ, Մարդը ափի մեջ, Երևան, 1963

ՊՍԱԶ—Պ. Սևակ, Անլուծի Զանգակատուն, Երևան, 1966

ՌԴ—Ռազմիկ Դավության

ՌԻԱԲԼՊ—Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978

ՌԻԱՀՀԵԽ—Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971

ՌԻԻԳ—Ռադիոհաղորդումներից

ՍԱԵԶ—Ս. Աղաբաբյան, Եղիշ Զարենց, Երևան, 1973

ՍՀ—«Սովետական Հայաստան», օրաթերթ, Երևան

ՍԳ—«Սովետական գրականություն», ամսագիր, Երևան

ՍԳԱԱԱԺՀ—Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978

ՎՏ—Վահան Տերյան

Խ. Գ. ԲԱԴԻՅԱՆ

ԿՈՉԱԿԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոչականը լեզվի շարահյուսական համակարգի կարևոր բաղադրիչներից մեկն է։ Հայ քերականագիտության մեջ դարեր շարունակ այն դիտվել է որպես նախադասության անդամ՝ ձևավորված առանձին հոլովով (կոչական հոլով)։ Լեզվի վաղ շրջանում, (իսկ բարբառներում՝ մինչև այժմ) կոչականը պահել է իր առանձնահատուկ վերջավորությունները¹։ Սակայն, հետագայում կոչականը հայերենում կորցնում է իր հոլովական վերջավորությունները և նույնանում ուղղական հոլովի հետ։ Այդ է պատճառը, որ XIX դարի 2-րդ կեսից սկսած հայ քերականները այն դիտել են որպես սպասարկու բառեր՝ դուրս թողնելով դրանք նախադասության կառուցվածքից։ Այժմ էլ շատերի կողմից կոչականները դիտվում են որպես արտանախադասական միավորներ։

¹ Հին լեզուներում (սանսկրիտ, հին հունարեն, լատիներեն, հին սլավոներեն, հին առաբեն և այլն) կոչականները ձևով (քերականորեն) տարբերակվել են։ ...Հունարենի նմանությամբ կոչականը որպես առանձին հոլով է դիտվել նաև գրաբարի հին քերականություններում։

...Արդի ժողովրդական խոսակցական հայերենում անձնանունները կոչական լինելու դեպքում երբեմն ստանում են հատուկ ձև (Հայրապետ-Հայրո, Կարապետ-Կարո, Վարսենիկ-Վարսո և այլն)։ Հ. Պետրոսյան, Ս. Դալստյան, Բ. Ղառազուլյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 156։

Իրականում կոշականները օժտված են ձևաբանական, շարանյութական և ռեական բազմաթիվ հատկանիշներով, դրանց շնորհիվ էլ նախադասության մեջ շատ կարևոր դեր են խաղում. ունեն թե՛ իմաստային և թե՛ ֆերականական ու ռեական մեծ արժեք: Հենց այդ պատճառով էլ պետք է վերանայել կոշականների վերաբերյալ քերականագիտության մեջ տիրող այն կարծիքը, թե դրանք լոկ սպասարկու բառեր են և նախադասության հետ քերականորեն չեն կապվում:

Պետք է ասել, որ նման կարծիքներ եղել են և կան նաև ռուսական քերականագիտության մեջ: Սակայն թե՛ անցյալի և թե՛ ներկայի մի քանի ռուս լեզվաբաններ վերանայել են հնացած տեսակետները և բոլորովին այլ մոտեցում ունեն կոշականների վերաբերյալ՝ դրանք դիտելով որպես նախադասության հարաբերակցական, վերաբերական (соотносительные) անդամներ:

Կոշականը արտահայտվում է մեկ բառով կամ բառակապակցությամբ և ցույց է տալիս այն անձը կամ առարկան, որին հասցեագրված է խոսքը:

Խոսողը կամ գրողը կոշականին դիմում է այն դեպքում, երբ ցանկանում է փոխադարձ խոսքային կապի մեջ մտնել, հաղորդակցվել խոսակցի հետ, նրա ուշադրությունը հրավիրել դեպի կատարվող հաղորդումը, նրան ընդգրկել խոսքային ոլորտ: Այսպիսի հաղորդակցումը կարող է լինել երես առ երես (այս դեպքում կապը կլինի անմիջական, և մեծ մասամբ որպես խոսքային հաղորդակցման ձև հանդես կգա երկխոսությունը). խոսողը կամ գրողը կարող է նաև մտովի դիմել հաղորդակցման ոլորտը ներգրավվող անձին կամ առարկային (այս դեպքում խոսողը մեծ մասամբ ինքն իր հետ է լինում, կամ խոսակցին պատկերում է մտովի. լինելով իր խոհերի, վերհուշների, հիշողությունների հետ, նա կարող է նույնիսկ իր խոսքի պատասխանին էլ չսպասել): Եթե առաջին դեպքում խոսակցի ներկայությունը պարտադիր է, ապա այս դեպքում այն ենթադրվում է:

Կոշականը իր քերականական առանձնահատկություններով դրսևորվել է մեր լեզվի երեք փուլերում՝ գրաբարում, միջին հայերենում և նոր գրական հայերենում: «Դեռևս հնդեվրոպական նախալեզուն, — գրում է պրոֆ. Աճառյանը, — գիտեր հետևյալ 8 հոլովները՝ ուղղական, կոշական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական»²: Հնդեվրոպական նախալեզվի կոշական հոլովը կոչվում էր *vocatif*³:

² Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1957, հ. 3, էջ 335:

³ Նույն տեղում, էջ 333:

Թեև դեռ V դարում հայերենում համարյա վերացել էին կոշական և ուղղական հոլովների ձևական տարբերությունները, բայց մինչև XIX դարի կեսերի օտարազգի և հայ քերականների աշխատություններում կոշականը հիշատակվում է որպես առանձին հոլով (Կղեմես Գալանոս, Յոհան Երոդեր, Մխիթար Սեբաստացի, Պաղտատար Դպիր, Հովհաննես Զուլայեցի, Միքայել Չամչյան): Ծիշտ է, այդ կոշականը շատ չէր տարբերվում ուղղականից, բայց այնուամենայնիվ նրանից առանձնանում էր հետևյալ հատկանիշներով. «Կոշականը ձևավորվում է ուղղականի կոշական տարբերակով, որ ի տարբերություն բուն ուղղականի՝

ա) երբեք հոդ չի ստանում (պետք է ասել՝ որոշիչ հոդ-և. Բ.),

բ) միշտ շեշտված է լինում և

գ) միշտ անջատվում է նախորդ և հաջորդ բառերից որոշակի դադարով»⁴:

Բերված վկայությունները խոսում են այն մասին, որ թեև կոշական հոլովը գրաբարում նույնացել էր ուղղականի հետ, բայց այնուամենայնիվ, բացի շեշտի, հնչերանգի և անհոդակրության տարբերակումներից որոշ կոշականներ (հատկապես հատուկ անունները) գրաբարում ևս պահպանում էին իրենց առանձնահատուկ վերջավորությունները: Այս փաստի ամենալավ վկայությանը հանդիպում ենք հին լեզուների լավ գիտակ Հրաչյա Աճառյանի աշխատություններում:

«Հայերենի մեջ, ինչպես հայտնի է,— գրում է Աճառյանը,— կոշականի առանձին հոլոված չկա. բայց հետևելով հունարենին, ստեղծվել է հին հայ Ոսկեդարյան գրականության մեջ է, երբեմն էլ և հանգով կոշական, որ երբեմն այժմ էլ գործածական է. օրինակ՝ «Ղազարէ, արի եկ արտաքս», «Եղբայր սիրելի Աթանասիէ», «Արքայ Ագրիպպա», «Պետրէ, Մարտիանէ, Մակարիէ, Վիտալիէ, Զոսիմա»»⁵:

Ակադեմիկոս Գ. Զահուկյանը նույնպես վկայում է, որ «...Հին հայերենում կոշական հոլովի բացակայության մասին կարելի է խոսել միայն որոշ վերապահությամբ»⁶:

Գրաբարում, ինչպես նաև բարբառներում կոշականների յուրահատուկ վերջավորություններով ձևավորման մասին է խոսում նաև բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Քոսյանը: Նա իր «Կոշականի հետքեր հայերենում»⁷ հոդվածում գրում է.

4 Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974 թ., էջ 368:

5 Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 423:

6 Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սխեմներ և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 132:

7 «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1974, № 3, էջ 166—170:

«Սակայն մի շարք բարբառների տվյալներ վկայում են, որ կոչականը երկար ժամանակ ունեցել է նաև ձևային տարբերություն, որն արտահայտվել է ոչ միայն ձայնարկությունների գործածությամբ (ո՛ւլ, ա՛յ և այլն) այլև մի շարք գոյականների (մասնավորապես անձի հատուկ անունների) վերջամասի կրճատումով և օ, է վերջավորությունների գործածությամբ (Հարսէ, նանէ, մա՛ւօ, լուբզօ)»³:

Ասվածին կարելի է ավելացնել, որ օ-ով և է-ով վերջացող կոչականներից բացի մեր բարբառներում և խոսակցական լեզվում (երբեմն էլ գրականում) տարածված են նաև ա-ով և ի-ով վերջավորվող կոչականներ (բիրա, հէրա, մէրա, նանի, տաոի, պապի, ապի):

Այս նույն հոդվածում Քոսյանը միաժամանակ ապացուցում է, որ այդպիսի վերջավորությունները ոչ թե օտար լեզուների ազդեցության արդյունք են, այլ մեր լեզվի հին շրջանից եկած ժառանգություն:

Մեր լեզվի հին և միջին շրջաններում կոչականները առատորեն են գործածվել հատկապես ժողովրդական ստեղծագործություններում և եկեղեցական գրականության մեջ: Ահա մի քանի օրինակ հիթանոսական շրջանի և միջնադարյան ժողովրդական երգերից.

Քեզ ասեմ, այր ֆա՛ջ Արտաշէս,

Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց (ՄՀՔ, 1, էջ 3):

Կոռ՛ւնկ, ուստի՞ կու գաս, ծառայ եմ ձայնիդ,

Կոռ՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս (ն. տ., էջ 6):

Ջրի՛կ, ո՞ր այնեն կու գաս, իմ պա՛ղիկ ջրիկ ու անուշիկ (ն.տ. էջ 8):

Խո՛շ եար, քեզ լալով սելամ, ես ի քո քաղքէն կու գնամ (ն.տ. էջ 11)

Հովե՛ր, տարութե՛ր հովեր, դեշը տար, աղուորը բեր (ն.տ. էջ 16):

Օրինակներ V—X դարերի գեղարվեստական գրականությունից.

Ընդ առաւօտս լուիցես Ձայնի իմում, Տէ՛ր (ն.տ. էջ 35):

Ողորմեայ ինձ, Աստուած (ն. տ. էջ 35):

Ուրախ լեր, Նուսաղէ՛մ ֆաղաֆ, եմ ցնծա, Սիօվն, Մա՛յր եկեղեցի (էջ 32):

³ Հիշյալ հոդվածում Քոսյանը գրում է, որ հարեան լեզուներից կոչական հոլովածն ունեն բրդերենը, վրացերենը, հունարենը: Քրդերենում արական սեռի գոյականները կոչականում ստանում են օ վերջավորություն (koro, bavo) իգականը՝ e (kače), վրացերենում կոչականի վերջավորությունը օ-է (kačo, khalo, amchanago). իսկ հունարենը կոչականի բազմազան ձևեր ունի՝ դրանցից են a, e վերջավորությունները:

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քոյ անշարժ պահեայ (ն.տ. էջ 32),

Վտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց,

Աստուած խաղաղութեան, օգնես ինձ (Մեարոպ Մաշտոց):

Ինչպես նկատեցի է, գրաբարում ու միջին հայերենում էլ ժամանակակից հայերենի նման կոշականները կարող են լինել միանշանակ և բազմանշանակ (ծավալուն), որտեղ բազմանշանակ կոշականի գերադաս անդամի լրացումները կարող են պիլիւ և՛ նախադաս (ծուսաղեմ՝ քաղաք, Մա՛յր եկեղեցի), և՛ ետադաս (Թագաւոր երկնաւոր, Աստուած խաղաղութեան): Այդ լրացումները կարող են լինել որոշիչներ (բերված նախադասութիւններում), հատկացուցիչներ՝

Աստուած իմ, որ բանաս ձեռն քոյ,

Եվ ընուս զամենայն արարածս ողորմութեամբ քով (էջ 99):

Որդի՛մ մարդկան, օրհնեցէք, զի վասն մեր մարմնացավ (էջ 37):

Եվ բացահայտիչներ (մի կոշականը իր լրացումով՝ մյուս կոշականի համար)։

Հա՛յր երկնաւոր, Աստուած՝ ճշմարիտ,

Ջոր առաքեցեր զՈրդիդ քո սիրելի,

Ի խնդիր մոլորեալ ոչխարին (Ներսես Շնորհալի):

Զարմանալի է ինձ,

Քան զերգս երաժշտականաց,

Զայնս ողբոց քոց հնչմունք,

Ո՛վ երանելի տէր Վահան, ընտրեալ յԱստուծոյ (Խոսրովադուխտ Գողթանցի):

Հայոց լեզվի զարգացման հաջորդ փուլում՝ միջին հայերենում, նույնպես կոշականը հանդես է եկել ուղղական հոլովաձևով և շեշտ է ընդունել, ունեցել է արտաբերման յուրահատուկ, ընդգծված հնչերանգ⁹։

⁹ Միջին հայերենի կոշականը բավականին հանգամանորեն ուսումնասիրել է բան. գիտ. քննադատ Պ. Վարդապետյանը։ Այստեղ նա միանգամայն ճիշտ է նկատել, որ «Բարբ կոշական կարող է դառնալ միայն այն ժամանակ, երբ նրա և նախադասութեան մնացած մասերի միջև կա ներքին, իմաստային կապ»։ Սրանից էլ հանգում է այն ենթադրութեան, որ «Եթե կա ներքին, իմաստային կապ, ապա պետք է ենթադրել, որ կա նաև արտաքին քերականական կապ»։ Միամասնակ նա ճիշտ է նկատել, որ կոշականը նախադասութեան մյուս անդամների հետ պտնվում է հարաբերակցական կապի մեջ և հետևաբար նախադասութեան յուրահատուկ անդամ է (ՏԷՍ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմութեան», հատոր Բ, Երևան, 1975, էջ 187—189)։

Միջին հայերենում նույնպես կոչականները արտահայտվել են մեկ կամ մի քանի բառերով (միանդամ և բազմանդամ): Միանդամ կոչականները արտահայտվել են գոյականի ուղիղ ձևով, եզակի և հոգնակի թվերով. օրինակներ՝ Յակոբ, զարթիր ի քնոյ մեղաց» (Հովհ. Նրզնկացի, Պլուզ): «Բարուն, ողորմած է Տէր» (Խաչատուր Կեչառեցի): «Նըբա՛րֆ, ձեզ խրատ մի տամ՝ Մի կենաք դուք շատ խոր ի քուն» (Խաչատուր Կեչառեցի):

Որպես կոչական կարող են հանդես գալ նաև ածականները՝ փոխանվանաբար գործածվելիս. «Յիմա՛ր, զինին չէ բարի, նա ամեն մեղաց բանալի» (Խաչատուր Կեչառեցի): «Ո՛վ գարշելի, ես քեզ կով գիտեի, այժմ քեզ ո՛վ արեց պատարագիչ, ասա ինձ» (Վ. Ալեկեցի):

Բազմանդամ կոչականները կազմված են լինում երկու և ավելի բառերից, որտեղ բուն կոչական-լրացյալը իր լրացումների հետ կարող է հանդես գալ որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի, բացահայտիչ-բացահայտյալի հարաբերություններով: Լրացումները կարող են արտահայտված լինել ածականով, դերանվամբ, դերբայներով, թվականներով: Դրանց հետ շատ հաճախ հանդես են գալիս նաև ձայնարկություններ: Բերենք մի քանի օրինակներ.

Հավատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ,
Անբաժանելի՛ լոյս՝ միասնական սո՛ւրբ երո՜րդութիւն (Ներսես Շնորհալի):

Այստեղ կա և որոշիչ-որոշյալի և բացահայտիչ-բացահայտյալի կապակցություն:

Արեա՛յ երկնաւոր, տուր ինձ դարձայութիւն քոյ... (Ներսես Շնորհալի):

Դատաւո՛ր արքաւ, յորժամ գաս փառօր:

Հօր դատել զկենդանիս և զմեռյալս (Ներսես Շնորհալի):

Այս նախադասություններում կոչականներն ունեն որոշիչ լրացումներ՝ և՛ նախադաս, և՛ վերջադաս:

Բերենք հատկացուցիչ լրացումների օրինակներ՝ նախադաս և ետադաս՝

Մի՛րտ իմ, ընդե՞ր ես խոռվեք, Աչ՛ֆ իմ, ընդե՞ր ես խավարեք...

Խե՛լֆ իմ, ընդե՞ր ես ճապաղեք, Մի՛տֆ իմ, ընդե՞ր ես շխարեք (Ֆրիկ):

Սիօնի՛ որդիֆ, զարթի՛ք,

Հարսին լուսոյ տուր աւետիք (Ներսես Շնորհալի):

Բացահայտիչի օրինակ՝

Յայնժամ ասէ սուրբ թագաւորն.

«Քաջ Լիպարիտ՝ մեծ զօրական,

Հեծելս քեզ համար եկան

Մինչ յայս տեղիս, ուր կանգնեցան (Հովհաննես Թլկուրանցի)։

Դժվար չէ նկատել, որ միջին հայերենում նույնպես, ինչպես գրաբարում, պոեզիայում գերակշռելի են որոշիչների և հատկացուցիչների ետադաս կիրառությունները, իսկ բացահայտիչներինը՝ միայն ետադաս։

Լեզվի զարգացման ավելի ուշ շրջանում պատմական ու պարառական հոլովների հետ հայոց լեզվից դուրս եկավ նաև կոչական հոլովը, և որովհետև այն իր ձևավորման ցուցիչը չունի, նույնացավ ուղղական հոլովի հետ։

Գաբրիել Ավետիքյանի, Արսեն Բազրատունու, Արսեն Այտընյանի և դրանցից հետո եկած քերականների աշխատություններում այլևս կոչական հոլովի չենք հանդիպում։

Ժամանակակից հայերենի քերականագիտական աշխատություններից շատերում և հատկապես դասագրքերում կոչականը գրեթե անտեսվել է. դրա մասին խոսվում է երբեմն հպանցիկ, երբեմն էլ մակերեսայնորեն։ Խոսելիս էլ այն դիտում են նախադասության կազմից դուրս, որպես արտանախադասական միավոր, այսինքն սպասարկու բառ։ Մինչդեռ, իրականում այդպես չէ։

Արևելյան աշխարհաբարի գիտական քերականության հիմնադիր, բազմավաստակ հայագետ Մանուկ Աբեղյանը, խոսելով ժամանակակից հայերենի կոչականի մասին, վկայում է, որ նախագրաբարյան շրջանում (ներանց էլ հետո) հայերենում տարբերակվել են ուղղական, կոչական և հայցական հոլովները, սակայն վերջընթեր վանկի շեշտի՝ դեպի վերջին վանկը տեղափոխվելու պատճառով «...ծզակի ուղղական, կոչական և հայցական հոլովները, որոնք սկզբնապես տարբեր ձևեր, այսինքն տարբեր վերջավորություններ են ունեցել, մնացել են առանց որևէ վերջավորության և բնի ձայնավորի ու նույնացել են իրար հետ»¹⁰։ Սահմանելով կոչականը, մեծ լեզվաբանը նրա վերաբերյալ երկու շատ կարևոր դիտողություն է անում և դրանով տարբերակում է կոչականների գործածության երկու ոլորտները. 1) երկրորդ դեմքի բայերի հետ հանդես գալիս կոչականը դառնում է ենթակայի լրացում. 2) առաջին կամ երրորդ դեմքի բայերի հետ գործածվելիս կոչականները առանձին նախադասություններ են դառնում (այս մասին հանգամանորեն խոսելու ենք «Կոչականի քերականական հատկանիշները» գլխում)։

Դպրոցական դասագրքերում կոչականների վերաբերյալ գիտելիքներ են հաղորդվում միայն մի քանի տողով, որտեղ նշվում է, որ կոչականներ-

10 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 335, 339, 410.

ըր նախադասության անդամ չեն, որ դրանք նույնիսկ նախադասության կազմի մեջ չեն էլ մտնում¹¹:

Ժամանակակից հայոց լեզվի կոչականների համեմատաբար ընդարձակ ուսումնասիրության հանդիպում ենք պրոֆեսոր Վ. Առաքելյանի աշխատություններում: Հետեւելով ռուսական ակադեմիական քերականության օրինակին, նա բավականին մանրամասնորեն քննում է նախադասության մեջ կոչականի ունեցած դերի, արտահայտման ձևերի, շարահասության ու հնչերանգի շատ հարցեր: Առաքելյանը թեև կոչականը նախադասության անդամ չի համարում, բայց եւայնպես նրան վերադրում է ուղղական հոլով. «Ինչ խոսքի մաս էլ կոչական դառնա, կիրառվում է ուղղական հոլովի ձևով և ունենում է գոյականի առում... Նույնիսկ այն հատուկ անունները, որոնք յուրահատուկ կոչականի ձև ունեն, գործածվում են որպես ուղղական»¹²:

Ժամանակակից հայերենում կոչականը ուղղական հոլովով են համարում նաև պրոֆեսոր էդ. Աղայանն ու դոցենտ Հ. Բարսեղյանը¹³:

Կոչականի մասին խոսում է նաև ակադեմիկոս Գ. Զահուկյանը: Նա իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» արժեքավոր աշխատության էջերում տարբեր առիթներով անդրադառնում է նաև կոչականին՝ այն դիտելով նախադասության, որպես հաղորդման ակտի, ընկալողի նշանակում (Հախճա՛ր, եկ): Այն ձևավորվում է ուղղականի կոչական տարբերակով, հոդ չի ստանում, շեշտվում է և տրոհվում: Զահուկյանը նշում է նաև, որ բացի համադրական ձևից կոչականն ունի նաև վերլուծական ձևեր, որոնք արտահայտվում են հատուկ կոչական բառ-մասնիկներով... Դրանք երկուսն են՝ ա՛յ և ո՛վ: Առաջինը գործածվում է միայն անձի առման դեպքում (ա՛յ մարդ, ա՛յ ընկեր...) և որոշ գործածություններում ունի հանդիմանական երանգ: Իրերի անձնավորման դեպքում այս մասնիկը նույնպես գործածելի է (ա՛յ գետ, ա՛յ ծառ): Ով բառ-մասնիկը ոճին ավելի հանդիսավորություն է հաղորդում (ո՛վ գեղեցկություն, ո՛վ սեր): Զահուկյանը խոսում է նաև կոչականների ու ձայնարկությունների զուգորդումների, ինչպես նաև կոչականի դեր կատարող հատուկ անունների կրճատ գրության մասին՝ Կարո՛ (Կարապետ), Մարո՛ (Մարգարիտ), Հայրո՛ (Հայրապետ) և այլն¹⁴:

11 Տե՛ս Գ. Սևակ, Հայոց լեզու, Շարահյուսություն 7—8 դաս. 1977, էջ 68:
Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու 4 դաս. 1976, էջ 42: Բ. Զախարյան, Հայոց լեզու 3 դաս. 1973 էջ 29:

12 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 2, Երևան 1964, էջ 416—433:

13 Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու 5-7 դաս. Երևան, 1973, էջ 18:

14 Գ. Զախարյան, Ժամ. հայերենի տեսութ. հիմունքները Երևան, 1974, էջ 199, 368,

կոչականի մասին ավելի հետաքրքիր դիտողություն ունի պրոֆեսոր Ռ. Իշխանյանը: Հոլովների կիրառական նշանակության մասին նա գրում է. «Հայերենի հինգ հոլովներից յուրաքանչյուրը խոսքի մեջ կատարում է մի շարք դերեր կամ ձևավորում է նախադասության տարրեր անդամներ»: Եվ ուղղական հոլովով դրվող մի շարք անդամների հետ նշում է նաև կոչականը¹⁵: Եզրակացությունը պարզ է. նա կոչականը համարում է նախադասության անդամ և դնում է ուղղական հոլովով:

Ռուս քերականագիտական գրականության մեջ կոչականների վերաբերյալ եղել են և կան տարբեր, երբեմն էլ իրարամերժ կարծիքներ: Անհրաժեշտ ենք համարում համառոտակի անդրադառնալ այդ կարծիքներից մի քանիսին:

Կոչական (обращение) տերմինը ռուս քերականագիտության մեջ առաջինը գործածել է ականավոր լեզվաբան Ֆ. Ի. Բուսլաևը իր «Ռուսաց լեզվի պատմական քերականություն» գրքում: Այստեղ նա նշում է, որ հին ռուսերենում կոչականը հատուկ հոլովաձև է ունեցել (звательный падеж)¹⁶, որը հետագայում կորցնելով իր վերջավորությունը, նույնացել է ուղղականի (именительный) հետ: Բուսլաևը կոչականը չի դիտում որպես նախադասության անդամ, այլ համարում է «Դեմֆերի միջև փոխհարաբերությունների արտահայտման ֆեռականական միջոցներից մեկը՝ շարադասության և շեշտի հետ միասին»¹⁷:

Նշանավոր ռուս լեզվաբաններ Ա. Մ. Պեշկովսկին¹⁸, Դ. է. Ռոզենտալը¹⁹, Ա. Ն. Գվոզդևը²⁰ և ուրիշներ կոչականը քննում են նախադասության անդամ չհանդիսացող բառերի և բառակապակցությունների մեջ: Հարցի նկատմամբ նույն կարգի մոտեցման ենք հանդիպում նաև ռուսական ակադեմիական քերականության մեջ. Ահա այդ սահմանումը. «Կոչական են կոչվում այն բառերը կամ բառակապակցությունները, որոնք նախադասության կազմի մեջ չեն մտնում, կամ մտնում են, բայց ֆեռականորեն նախադասության որևէ անդամի հետ չեն կապվում և անվանում են այն անձը կամ առարկան, որին ուղղված է խոսքը»²¹:

¹⁵ Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան 1971, էջ 42—43:

¹⁶ Ф. И. Буслаев, Историческая грамматика русского языка, ч. I, М., 1875, стр. 209.

¹⁷ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Երևան, 1975, էջ 187:

¹⁸ Sб"u А. М. Пешковский. Русский синтаксис в научном освещении, М., 1938, 367:

¹⁹ Современный русский язык, ч. 2, под. ред. Д. Э. Розенталя, М., 1976, стр. 131—134.

²⁰ А. Н. Гвоздев, Современный русский литературный язык, ч. 2, М., 1968, стр. 195—197.

²¹ Грамматика русского языка, под ред. В. В. Виноградова, том 2, ч. 2, М., 1954, стр. 122.

Ա. Ա. Շախմատովը թեև շատ չի հեռանում նշված կարծիքներից, բայց կոշականների մի տեսակը նա դիտում է որպես հատուկ տիպի նախադասություններ:

«Խոսքը այնպիսի նախադասության մասին է, որտեղ որպես գլխավոր և միակ անդամ հանդես է գալիս կոշականը... Սա էլ այն դեպքում, երբ կոշականը արտաբերվում է առանձին հնչեքանգով և արտահայտում է վախ, զարմանք, կշտամբանք, հանդիմանություն, նախադասություն է վախ՝ ալլեն»²²:

Կոշականի վերաբերյալ բոլորովին այլ կարծիք ունի պրոֆ. Ա. Գ. Ռուդնևը: Նա ավելի հանգամանորեն է քննում կոշականի քերականական կապը նախադասության անդամների և մյուս միավորների հետ, նրա իմաստային դերը նախադասության կառուցվածքում, ինչպես նաև կոշականի քերականական ու ոճական դրսևորումների ոլորտները: Իր «Синтаксис осложненного предложения» և «Синтаксис современного русского языка» աշխատություններում անվանի լեզվաբանը, հակադրվելով մի շարք լեզվաբանների, որոնք կոշականը բոլորովին դուրս են թողնում նախադասության կառուցվածքից, գրում է. «Նախադասության մեջ չեն կարող լինել բառեր, որոնք ինչ-որ չափով, ինչ-որ իմաստային կողմից չկապվեն նախադասության հետ ընդհանրապես, իհարկե, եթե դրանք մակարայծ բառեր չեն»²³:

Այնուհետև Ռուդնևը նշում է, որ լեզվաբանները կոշականը նախադասության անդամ չեն դիտում, որովհետև նրանք ընդունում են նախադասության անդամների քերականական կապի 3 տիպի հարաբերություն՝ համաձայնություն, խնդրառություն և առդրություն, իսկ կոշականը այդ 3 կարգից դուրս է, մինչդեռ կոշականի և ամբողջ նախադասության կամ նրա անդամների միջև կա ներքին՝ իմաստային կապ: Շարունակելով իր միտքը, պրոֆ. Ռուդնևը արամաբանական է համարում այն, որ բացի նշված 3 կարգի քերականական կապակցության միջոցներից պետք է ընդունել նաև նախադասության անդամների կապի չորրորդ՝ հադաբերակցական (соотношение)²⁴ եղանակը:

Այսպիսով, Ռուդնևը նախադասության անդամ է համարում նաև կոշականը, որը նախադասության մյուս անդամների հետ հադաբերակցական կապի մեջ է: Բացի այդ, լեզվաբանը կոշականի՝ նախադասության անդամների հետ կապվելու իմաստային ու քերականական կապի մյուս դրսևորումը համարում է հատուկ հնչեքանգը:

²² См. А. А. Шахматов, Синтаксис русского языка, Л., 1940, էջ 86 և 261:

²³ А. Г. Руднев, Синтаксис современного русского языка, М., 1968, ст. 214:

²⁴ Նույն տեղում:

նվ Վերջապես, երևելով կոշականի իմաստային, քերականական, ոճական և մյուս առանձնահատկություններից, Ռուդներ կոշականը սահմանում է այսպես՝

«Կոշականը նախադասության կառուցվածքում հանդես եկող առանձնահատուկ անդամ է, որն արտահայտվում է գոյականի կամ գոյականացված այլ խոսքի մասի ուղղական հոլովածեով, ընդգծում է այն դեմքը կամ առարկան, որին ուղղված կամ հասցեագրված է խոսողի խոսքը»²⁵,

Ռուդների այս տեսակետն է պաշտպանում նաև լեզվաբան Վ. Պ. Պրոնիչևը. նա իր «Синтаксис обращения» գրքույկում նույնպես ապացուցում է, որ կոշականը նախադասության մի առանձնահատուկ անդամ է, որը մյուս անդամների հետ հարաբերակցական կապի մեջ է, որովհետև այն անմիջապես առնչվում է նախադասության գլխավոր անդամների հետ: Կոշականը ավելի շատ կապվում է բայով արտահայտված ստորոգյալի հետ, այդ պատճառով էլ նրան կարելի է վերագրել եղանակի ֆեռականական կարգը: Կոշականին հատուկ է նաև հոլովի ֆեռականական կարգը, որը նրա ամենահին ու ամենացայտուն ցուցիչն է եղել: Այս մասին են վկայում ինչպես բազմաթիվ հայ, այնպես էլ ռուս լեզվաբաններ. վերջիններս նշել են հատկապես, որ հին ռուսերենում կոշականն ունեցել է հատուկ հոլոված (звательный падеж)²⁶, իսկ ճանաչված լեզվաբան Ն. Ս. Վալգինան ապացուցում է, որ ժամանակակից ռուսերենում նույնպես առկա են կոշականի հոլովածի հետքեր²⁷:

ԿՈՉԱԿԱՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ՀԱՏԱՆԻՇՆԵՐԸ

Ինչպես նշվեց վերևում, լեզվաբանների մի մասը կոշականը նախադասության անդամ չի համարում, որովհետև կոշականը դուրս է նախադասության անդամների քերականական կապակցության երեք կարգի հարաբերություններից՝ համաձայնություն, խնդրառություն և առդրություն: Մինչդեռ նախադասության մեջ կոշականի կատարած դերի, նրա քերականական հատկանիշների մանրամասն ու խորադին ուսումնասիրությունը ապացուցում է, որ կոշականի և նախադասության գլխավոր

²⁵ А. Г. Руднев, *նշվ. աշխ.* էջ 218.

²⁶ S⁶ М. В. Ломоносов, *Русская грамматика* (Собр. соч. т. 7, М—Л. 1952) Ф. И. Буслаев, *Историческая грамматика русского языка*, ч. 1, М., 1875, А. А. Шахматов, *Синтаксис русского языка*, Л. 1941.

²⁷ S⁶ Н. С. Валгина, *Синтаксис современного русского языка*, М., 1978, стр. 273—277.

անդամների կամ ամբողջ նախադասության միջև կա ներքին՝ իմաստա-
յին կապ: Եթե կա իմաստային կապ (իսկ դրա առկայությունը ցույց
կտրվի այս գլխում), ուրեմն կան նաև քերականական կապ: Հետևաբար
այս դեպքում ճիշտ են վարվում այն լեզվաբանները, որոնք ընդունում են
նախադասության անդամների կապի նաև շոբոբոդ տեսակը՝ վերաբերա-
կան հարաբերություն և կոշականն էլ համարում են նախադասության
վերաբերական անդամ:

Այս կապակցությամբ շատ ճիշտ դիտողություն ունի մեծավաստակ
հայագետ Մանուկ Աբեղյանը՝ կոշականին վերագրելով բացառապես
լրացման արժեք. «Կոշական անունը, երբ բայը երկրորդ դեմքով է, բա-
ցահայտիչ է ենթակայի, արտահայտված լինի ենթական դերանունով, թե
ոչ: Օրինակ՝ Դու, հայ գորապետ, գլխ հայերուն (Գ. Ք.): Լսիր, որդյակ,
հորդ խրատին»¹:

Այս բաժնում կաշխատենք ցույց տալ, որ իսկապես, կոշականը
նույնպես նախադասության անդամ է՝ կոշական անդամ, դրվում է ուղղա-
կան հոլովով և օժտված է քերականական բազմաթիվ հատկանիշնե-
րով:

Քանի որ կոշականը հիմնականում առնչվում է նախադասության
գլխավոր անդամների, ավելի շատ՝ ստորոգյալի հետ, հետևաբար և ընկ-
նում է բայ-ստորոգյալին հատուկ քերականական կարգերի՝ եղանակա-
վորման, դեմքի, թվի, երբեմն էլ ժամանակի ոլորտներում: Կոշականին
հատուկ է նաև լրացումներ ստանալու հանգամանքը:

Այս բոլորից բացի, կարևոր հանգամանք է նաև կոշականի հնչե-
րանգը, որը ձուլվում է ամբողջ նախադասության հնչերանգի հետ. այդ
ամբողջացնող հնչերանգով համախմբվում են նախադասության մեջ
մտնող բոլոր միավորները (նաև կոշականներն ու միջանկյալ բառերը)
որպես մեկ շարահյուսական կառուցվածք:

Նախադասությունների բազմաթիվ կառուցվածքներում հաճախ կո-
շականները ավելի որոշակի են նշում գործողության կատարողը, այն ան-
ձը կամ առարկան, որին ստորոգումով վերագրվում է որևէ հատկանիշ:
Այսպիսի դեպքերում կոշականները ավելի ակտիվ դիրում են հանդես գա-
լիս և համարժեք են դառնում ենթակային: Լեզվում տարածված երևույթ է
այն փաստը, որ կոշականների առկայության դեպքում շատ հաճախ նա-
խադասության ենթակաները չեն արտահայտվում, սակայն նախադասու-
թյան միտքը շատ պարզ ու որոշակի է լինում: Բավարարվենք մի երկու
օրինակով՝ «Ազնա՛, որ մեծանաս, ի՞նչ ես դառնալու» (Բակունց): «Մառ-
դի՛կ, ինձ շատ եք շարշարել» (Հ. Սահյան):

¹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 410:

Երկնքի՝ աստղեր, հոգւոյս մեջ ընկեք,
Կայծ տվեք, կյանք ձեր սիրահարին հեգ (Պ. Դուրյան):

Ազնո, մարդիկ, երկնքի աստղեր կոչականների հետ դու և դուք ենթակաների անհրաժեշտութիւնը չի զգացւում, որովհետեւ հենց այդ կոչականների մեջ է թաքնված դերանվամբ արտահայտված ենթակաների բովանդակութիւնը: Դեռ ավելին, եթե Ազնո, մարդիկ, երկնքի աստղեր կոչականների փոխարեն գործածված լինեին դու և դուք ենթակաները, ապա այդ նախադասութիւնների միտքը խիստ անորոշ կլիներ, բոլորովին հայտնի չէր լինի, թե հեղինակները ում հետ են խոսում, ովքեր են ընկած գործողութիւնների ոլորտում. «Դու, որ մեծանաս, ի՞նչ ես դառնալու», «Դուք ինձ շատ եք շարշարել», «Դուք հոգւոյս մեջ ընկեք»:

Մյուս կողմից, եթե խոսողի գիտակցութեան մեջ չլինի կոնկրետ անձը, առարկան, որին պետք է դիմի խոսողը, որին պետք է ուղղի իր խոսքը, երբեք նա չի դիմի դերանունների գործածութեանը: Այսպես, Բակունցը «Միրանի փողը» պատմվածքի գլխավոր հերոսին՝ Հազրոյին, եթե մեկ անգամ դիմած չլիներ, ապա դժվար թե նա միասին գործածեր և՛ կոչականը, և՛ դերանունը՝ «Հազրո, դու լա՞վ էիր ապրում քո գյուղում» (Բակունց):

Կամ՝ Համո Սահյանը մարդիկ կոչականի հետ գործածում է դուք ենթական, որովհետեւ միանգամայն որոշակի է, թե ում է դիմում բանաստեղծը, ում է ուղղում իր խոսքը. նա վերևի տողում դիմում է մարդկանց և իր դիմումի ուժը սաստկացնելու համար է միայն գործածում դուք ենթական, թեև առանց դրան էլ նրա խոսքի հասցեատերը շատ հայտնի է ու որոշակի:

Որքան էլ ինձնից հեռացել,

Դուք ինձ միշտ եղել եք մոտիկ:

Մարդի՛կ, ինձ շատ եք շարշարել,

Բայց էլի դուք լավն եք, մարդի՛կ (Հ. Սահյան):

Այստեղ տեղին է նորից հիշել Մ. Աբեղյանի ասածը այն մասին, որ կոչականը ենթակայի բացահայտիչ լրացումն է:

Բացի ենթակային փոխարինող կամ նրա հետ համընկնող կոչականներից (այս դեպքում նախադասութեան ստորոգյալը պետք է անպայման արտահայտված լինի բայի եզակի կամ հոգնակի թվի երկրորդ դեմքով), կան նաև կոչականներ էլ, որոնք փոխարինում են մի ամբողջ նախադասութեան, որի մեջ հեշտութեամբ կարելի է վերականգնել ստորոգյալը,

ինչպես նաև ենթական (այս դեպքում նախադասության ստորոգյալը արտահայտվում է բայի առաջին կամ երրորդ դեմքով): Այսպիսի կոշականների մասին Մ. Աբեղյանը գրում է. «Երբ բայն առաջին կամ երրորդ դեմքով է, կոշական անունը մնում է խոսքի կապակցությունից դուրս և ցույց է տալիս մի առարկա, որին դիմում է խոսողը: Այս դեպքում կոշականը մենակ մի տեսակ առանձին խոսք է կազմում: Օրինակ, Տիգրա՛ն, ո՞վ է գնացել (իբրև՝ ասա դու, Տիգրա՛ն)»³:

— «Մայրի՛կ ի՞նչ է պատահել» (ԴԴՎ) նախադասության մայրի՛կ կոշականը փաստորեն մի զլխավոր նախադասության դեր է կատարել, կոշականի միջոցով շատ հեշտությամբ կարելի է վերականգնել այս նախադասության ստորոգյալը (ասա), ինչպես նաև՝ ենթական (մայրի՛կ, դու ասա, ի՞նչ է պատահել): Այս դեպքում նույնիսկ ենթական վերականգնելու հարկ էլ չի լինում, եթե չենք շեշտում հատկապես ենթական՝ (Մայրի՛կ, դու ասա, ի՞նչ է պատահել):

Այլ օրինակներ (որոնցում վերականգնում ենք ստորոգյալները):

— Տե՛ր Մամիկոնեից, (ասացե՛ք), մի՞թե մենք լուրջ կընդունենք զրադաշտական կրոնը (ԴԴՎ):

— Տե՛ր իմ, (իմացե՛ք, հասկացե՛ք) այս վանականները տվել են վանքի հարկը (նո՛ր)։

— Անդ՛ո, (նայիր), այ էն մեկին էլ կարամ խփեմ (Բակունց):

— Մո՛ւրո, (պատմի՛ր), իսկ ի՞նչ պատահեց Լենինին,— հարցրի ես (Բակունց):

Կոշականները հաճախ հանդես են գալիս զեղչված հանգույցով բաղադրյալ ստորոգյալների հետ⁴ և ավելի են ընդգծում ու տեսանելի դարձնում խոսողի ասելիքը, խոսքի ուղղվածության օբյեկտը: Այս երեւյթը հատուկ է գրեթե միայն գրավոր խոսքին, այն էլ մեծ մասամբ պոեզիային.

Երկի՛ր Հայաստան, իմ գագաթ, իմ լույս,

Հողմերին տրված դարավոր իմ ձյուն...

Դու ձյունամրրիկ իմ խելակորույս,

Դու ճերմակ հառաչ, դու սուրբ մոնչյուն (Վ. Դավթյան):

Օ՛, խաչքարեր, տխուր շիրիմներին քաշած,

Մատուռների քարեր, քարեր վաճֆի,

Դուք ծնկաչոք հայի արցունքներից մաշված:

Դուք մոմերի մրից սև՝ կրկնակի (Ս. Կապուտիկյան):

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս Ա. Քյուրֆյան, Անվանական բաղադրյալ ստորոգյալը և նրա խնդիր ու պարզա լրացումները, Երևան, 1975, էջ 7:

Նախադասութիւններէ մեջ կոշականները կարող են վերաբերել նաև դերանուններով արտահայտված ուղիղ և անուղղակի խնդիրներին՝ հանդես բերելով խնդրառական հարաբերութիւն, որը, ինչ խոսք, դրսևորվում է բայ-ստորոգյալների միջոցով:

Մանկությո՛ւն իմ քննադիւն,
Ես քեզ ինչպես մոռանամ (Սարմեն):

Ո՞վ քեզ ծեծեց, Մարո՛ ջան,
Ո՞վ անիծեց, Մարո՛ ջան (ՀԹ):

Դեպի ձեզ եմ դալիս, հայրենի՛ լեռներ (ՀԹ):
Մենզավայր իմ հաւաքատ, քեզնից ինչպե՞ս հեռանամ
(Հ. Սահյան):

Վերևում ասվածից և բերված օրինակները վերլուծելուց հետո կարելի է ասել, որ կոշականները նախադասութիւն կազմում հաճախ վճռական դեր են խաղում, երբեմն նույնիսկ ավելի կարևոր, քան ենթական (այդպիսի օրինակներ բերեցինք վերևում), հետևաբար, կոշականը իմաստային ու տրամաբանական կապերով կապված լինելով նախադասութիւն հետ, նրա կազմից դուրս մնալ չի կարող, մասնավոր, որ այն իր հնչերանգով ներառվում է ամբողջ նախադասութիւն հնչերանգի մեջ, իսկ նախադասութիւն հնչերանգը համախմբում, միավորում է նախադասութիւն կազմի մեջ մտնող բոլոր միավորները:

Մտնելով նախադասութիւն կազմի մեջ որպես նրա վերաբերական անդամ, կոշականը անպայմանորեն ներառվում է ստորոգյալի ոլորտում, հետևաբար և ձեռք է բերում ստորոգյալի հետ կապվելու քերականական հատկանիշներ: Ահա թե այս մասին ինչ է գրում ակադեմիկոս Վ. Վ. Վիկտորովը. «Ստորոգելիութիւնը, որ մեկնաբանվում է որպես իրականութիւն նկատմամբ արտահայտվածի հարաբերակցութիւն, բնութագրում է ոչ միայն երկկազմ, այլև միակազմ նախադասութիւնը: Այն հատուկ է նաև կոշականին՝ խոսքի հասցեատիրոջ անվանմանը: Այսինքն, այդ միջոցով նրա մասին հասկացութիւն արտահայտումը հարաբերակցվում է օբյեկտիվ իրականութիւն հետ և կոնկրետացնում է օբյեկտը իրական կամ ենթադրյալ անձը, որին խոսքով դիմում է խոսողը: Հարաբերակցութիւն էութիւնը տվյալ դեպքում կայունանում է հասկացութիւն կոնկրետացման մեջ, որը քերականութիւն մեջ իրականացվում է եղանակավորման, ժամանակի, դեմքի ու թվի կազմի միջոցով» (ընդգծումը մերն է)՝:

5 Вопросы грамматического строя (В. В. Виноградов. Основные вопросы синтаксиса предложения, М., 1955, ст. 405).

Ելնելով Վինոգրադովի այս նկատառումներից, քննենք կոշականի և քերականական այդ կարգերի հարաբերակցությունները ժամանակակից հայերենում:

Եղանակավորում.— Ամենից առաջ տեսնենք, թե կոշականը ինչքանով է առնչվում բայի եղանակների հետ: Վիճակագրական պարզ հաշվումներն էլ հավաստում են այն փաստը, որ կոշականները ամենից շատ հանդես են գալիս հատկապես հրամայական և բացականչական նախադասություններում: Հայտնի է, որ կոշականներն ունեն մի տեսակ նախադգուշացնող, հարկադրող հնչերանգ, որը միանալով հրաման և բացականչություն արտահայտող բառերին, ավելի է ուժեղացնում նրանց արտաբերումն ու հնչերանգը:

Հանդես գալով հրամայական նախադասություններում, կոշականները ավելի են կոնկրետացնում խոսքը, ավելի որոշակի են դարձնում գործողության կատարողին և կոչում են այն անձը կամ առարկան, որին ուղղված է ենթակայի հրամանը, կարգադրությունը, հանդիմանությունը, Բնականաբար այս դեպքում կոշականը հանդես կգա բայի հրամայական եղանակով արտահայտված ստորոգյալների հետ:

Թո՛ւք, բաճենե՛ր, սուրացե՛ք, տանկե՛ր, դեպի թշնամին... (Ավ. Իսահակյան):

Դուրս գնա՛, կորի՛ր, այ լի՛րք անզգամ,

Սև ու սուգ լինի թագ ու պսակդ: (ՀԹ)

«Զգուշացե՛ք, պարո՛ն, ապա թե ոչ ձեզ հետ կկորչի նաև ձեր աղջիկը» (ՇՊՀ):

Հրամայական երանգի նախադասություններում ենթակաները կոշականներին կարող են դիմել նաև խնդրանք, հորդոր, պահանջ, առաջարկություն արտահայտելու նպատակով.

Ձայն տուր, ո՛վ ծովակ (Բաֆֆի):

Կանգնի՛ր, քառավա՛նս, ինձի կթվա,

Թե հայրենիքես ինձ մարդ կկանչե (Ավ. Իսահակյան):

Ե՛կ, ի՛մ սրիճ, ի՛մ բարեկա՛մ սրազգին...

Երգենք ու լանք, լանք ու երգենք տրտմագին (Գարեգին Պեշկոբյան):

«Հիմա ճանապարհ ցույց տուր ինձ, Սաղաթե՛լ» (ՇՊՀ):

Կոշականները առատորեն են հանդես գալիս նաև արգելական հրամայականների հետ, նորից արտահայտելով հրաման, խնդրանք, պահանջ, առաջադրանք և այլն:

Մի՛ վազեք, ալի՛ք, կացե՛ք, կռակենք,
Մի՛ թողնեք չքնաղ այս վայրն հանգստյան (Հ. Հովհաննիս-
յան):

Մի՛ լար, որդի՛ս, որ չես լսում
էլ մայրական քաղցր օրոր... (Ալ. Մատուրյան):
Այսօր դու ոչ մի տեղ մի գնա, Արեւի՛կ, մնա ինձ մոտ (Վ. Պ. ԴԱ.):
Մի՛ դժգունիր, աշնա՛ն այգի,
Մի՛ հավաքվիր այդպես շտապ (Ս. Կապուտիկյան):

Կոչականները, հրամայականների համեմատությամբ ավելի սակավ,
հանդես են գալիս բացականչական նախադասություններում և դրանց
ավելի հուշական, զգացմունքային երանդ են հաղորդում: Այս դեպքում
կոչականի հետ հանգես եկող ստորոգյալները արտահայտվում են բա-
յի ըղձական եղանակով.

Ժողովո՛ւրդ իմ հանճարեղ, ստեղծագործ երգով լի,
Քո ստեղծող, կառուցող ու երգողը համբուրեմ (Դեմ):

Գնաս բարով, ա՛յ ուխտավոր,
Երանի քեզ, հա՛յ ուխտավոր (ՀԹ):

Թաղեմ քեզ, հատի՛կ և դարդս քեզ հետ (Հ. Հովհաննիսյան):
Մնաս բարով, Պարո՛ւյր (Վ. Պ. ԴԱ.):

Կոչականները, թեև սահմանափակ կիրառությամբ, բայց հանդես
են գալիս նաև բայի սահմանական, պայմանական ու հարկադրական
եղանակներով արտահայտված ստորոգյալների հետ առնչված:

Սահմանական եղանակի բայերի հետ գործածման օրինակ-
ներ.

Դուլքդ ասող ըմնաց, ո՞ւր ես գալիս, ա՛յ գարուն (Հ. Հովհան-
նիսյան):

Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ ճեզ (ՀԹ):

Արևի տակ հարավի, նրա այրող շողերում

Մրսում ես դու, հա՛յ տղա (Ս. Կապուտիկյան):

Դու նայեցիր, սիրելի՛ս, սև, արցունքոտ աչքերով (Դեմ):

Կոչականը պայմանական եղանակի բայերի հետ է հանդես գալիս
հատկապես արձակում, էպիկական ժանրի ստեղծագործություններում,

այն էլ գերազանցապես հեքիաթներում ու զրույցներում (այն ավելի շատ հատուկ է բանավոր խոսքին):

Մինչև իմ վերադառնալը, սիրելի՛ Լիլիթ, քեզ լավ կպահես (ՎՊԴԱ):

Սիմոն, վեր կկենաս, կգնաս քաղաք մի հարմար աշխատանք կնայես և կսկսես աշխատել, մինչև որ ես կգամ, կհասնեմ (հայ ժող. հեքիաթներից):

Այս եղանակի բայաձևերի հետ կոչականը հանդես է գալիս նաև հարցական երանգի նախադասություններում.

— Կգա՞ս այսօր ինձ մոտ, Լիլիթ:

— Կգամ, իսկ դու ինձ ո՞րտեղ կսպասես, անհաճգի՛ստ Պարույր (ՎՊԴԱ):

Պայմանականի ժխտականը նույնպես կարող է հանդես գալ կոչականի հետ⁶.

Մի՛ վախենար, նրա կրծքին

Չես թառամի, քննո՛ւշ վարդ (Ալ. Մատուրյան):

Մամբրե՛, չես գնա, մինչև Պարույրին չտեսնես (ՎՊԴԱ):

Կոչականները հանդես են գալիս նաև բայի հարկադրական եղանակի հետ.

Դու պիտի ծաղկես, երկի՛ր հայրական,

Քո ոգով, ոճով և բարձրագույն,

Դու պիտի հնչես, հնչես հաղթական,

Իմ հի՛ն հայ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ (Ավ. Իսահակյան)

— Արևի՛կ, իսկ ի՞նչ պետք է անենք առանց խմիչքի (ՎՊԴԱ):

Կոչականին կարելի է վերագրել նաև դեմքի քերականական կարգը, որը սակայն բայի նման դիմային վերջավորություններով չի տարբերակվում, այլ դերանունների նման տրամաբանական իմաստներով է

⁶ Մյուս եղանակների ժխտականները նույնպես կարող են կոչականների հետ հանդես գալ, բայց պայմանականն ենք նշում՝ նկատի ունենալով դրա ավելի լայն տարածված լինելը:

առանձնանում, որի պատճառով էլ բայով արտահայտված ստորոգյալի դեմքը համաձայնում է կոչականի հետ:

Քանի որ կոչականը այն անձն է կամ անձնավորված առարկան, որը հանդես է գալիս խոսքի ոլորտում և առնչվում է հեղինակի, խոսողի հետ որպես խոսակից, ուրեմն նրան վերագրվում է երկրորդ դեմքի քերականական կարգ:

Եվ որոտա՛ Զա՛նգ, և արթնացրո՛ւ
Դարավոր նիրհից Մասիսն ու Կազբեկ,
Թափ տո՛ւր թևերդ, արծի՛վ լեռներու,
Քնա՛ծ առյուծներ, բաշերդ թոթվեք (Ավ. Իսահակյան):

Անցո՛րդ, խոնարհի՛ր գլուխը քո սեգ՝
Այստեղ հանգչում է մի բուռ տիեզերք (Հ. Շիրազ):

— Թո՛ղ, Դիլա՛ն, գնա քեզ համար (Բակունց):

Շատ հաճախ մարդ խոսում է ինքն իր հետ, դիմում է իրեն իբրև խոսակցի, այդ դեպքում արդեն ինքը՝ խոսողը կամ մտածողն էլ է դիտվում որպես երկրորդ դեմք. «Գնա, Պեպո՛, գետինը լիզե... (ԳՍ., Պեպո): «Անդրեա՛ս էլիգրարով, լսո՞ւմ ես, տուր սուրդ թշնամուդ ձեռք, վիզդ ծռիր, որ նա կտրե» (ՇՊՀ): (Մեկը դիմելով ինքն իրեն՝ հիմա՛ր, ինչո՞ւ ժամանակին այդ մասին չէիր մտածում):

Երբեմն էլ կոչականին վերագրվում է առաջին դեմքի հատկանիշ. այս դեպքում եզակի թվով գործածված կոչականի հետ ստորոգյալը հանդես է գալիս հոգնակի թվով. պատճառն այն է, որ խոսողը խոսակցին ներառնում է առաջին դեմքի ոլորտում, և գործողության կատարումը վերագրվում է թե՛ ենթակային, և թե՛ կոչականին՝ միաժամանակ.

— Անիծեն՛ք, Սահա՛կ եղբայր, անիծենք անօրեններին, տեղն է, իրավունք է,— ասաց զայրացած Եզրասը (ԴԴՎ):

— Կռվեն՛ք, սպարապե՛տ, սերունդ—սերունդ կռվով գնանք, մի տեղ լույսը կբացվի,— ասաց Սահակ Շինականը (ԴԴՎ):

— Լավ կլինի, բոլորովին էլ նրանց շղիմենք, Պարո՛ւյր, (ՎՊԴԱ):

Կոչականին առաջին դեմքի հատկանիշ է վերագրվում և ստորոգյալը հոգնակի թվով է գործածվում նաև այն դեպքում, երբ խոսողը, հեղինակը դիմում է ինքն իրեն.

«Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ,

Ծերանում ենք, սիրելի՛ս,

Հասակակից կանանց արդեն մենք նայում ենք եղբոր պես (Պարույր Սևակ):

— Վատ ենք աշխատում, բարեկա՛մ, դրա համար մեզ չեն ների, —
ինքն իրեն խոսում էր վարպետ Սիմոնն ու շարունակում աշխատանքը
(Ավանգարդ):

Թվի քերականական կարգը նույնպես հատուկ է կոշականին: Դեմքի
քերականական կարգի վերաբերյալ բերված օրինակներում անմիջապես
նկատելի էր, որ այս երկու կարգերը հանդես են գալիս միասնա-
բար:

Եթե խոսքը ուղղված, հասցեագրված է մեկ մարդու կամ շնչավոր-
ված առարկայի, կենդանու, ինչպես նաև բնության երևույթի, որին
խոսողը ներառնում է խոսքի ոլորտում, այդ դեպքում կոշականը կար-
տահայտվի եզակի թվով.

Հրա՛շք-աղբիկ, գիշերներին թագուհի,
Ճառագայթող քո աչքերով դու եկար (Վ. Տերյան):
Պանդուխտ եմ, բույրի՛կ, մանուկ օրերից... (ՀԹ):

Իսկ եթե խոսողը դիմում է մի քանի անձանց, առարկաների կամ
կենդանիների, այդ դեպքում կոշականը կարտահայտվի հոգնակի թը-
վով.

Է՛յ հի՛ն ծանոթներ, է՛յ կանա՛չ սարեր,
Անա՛ ձեզ տեսա, ու միտս բեկան,
Առաջս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դեմքեր, որ հիմի չկան (ՀԹ. Անուշ):

Ձորե՛ր, այ ձորե՛ր, սև, լայնաբերան... (ն.տ.):
...Քնա՛ծ ապյուծներ, բաշերդ թոթվեք... (Ավ. Իսահակյան):

Կոշականների թիվը, ինչպես երևում է բերված օրինակներից, կա-
րող է համընկնել նախադասության ստորոգյալի թվի հետ (Դուք էլ ինձ
հետ ձե՛ն տվե՛ք, իմ դարձերի թա՛յ սարեր (ՀԹ): Մի լա՛ր, ի՛մ աղջիկ, ինձ
խոստովանի՛ր (ՀԹ), կարող է չհամընկնել (Լեոնե՛ր, ներշնչված դարձ-
յալ ձեզանով, Թնդում է հոգիս աշխուժով լցված (ՀԹ): Տե՛ր, մինչև երբ
մեր աչքերը քեզ մնան (ՀԹ):

Կոշականի և նախադասության ստորոգյալի թվերը համընկնում են,
երբ կոշականը նույնանում է ենթակայի հետ (Կանգնի՛ր քառավա՛նս, ինձի
հետդ տար (Ավ. Իս.), դրանք չեն համընկնում, երբ կոշականը և նախա-
դասության ենթական տարբեր են. (Ընկերե՛նք, ես ամեն ինչ ասացի):

Մի կարևոր հանգամանք ևս ապացույց է այն բանի, որ կոշականը
նախադասության անդամ է. դա այն է, որ կոշականին հատուկ է լրա-

ցումներ ստանալու շարահյուսական հատկանիշը: Ինչպես գոյականով արտահայտված նախադասության ցանկացած անդամը, այնպես էլ կոչականը օժտված է գոյականական անդամի լրացումներ ունենալու հատկությամբ:

Ուրեմն, ինչպես նախադասության ցանկացած անդամի, այնպես էլ կոչականին հատուկ է ընդարձակումը: Միանդամ կոչականը, բնականաբար, հաճախ որոշակի չի ներկայացնում, երբեմն էլ թերի է թողնում, այն անձը կամ առարկան, որին դիմում է խոսողը. այդ պատճառով էլ անհրաժեշտություն է առաջանում կոչականը համալրել իրեն լրացնող այլ անդամներով՝ որոշիչներով, հատկացուցիչներով և բացահայտիչներով, որոնք կարող են արտահայտված լինել տարբեր խոսքի մասերով:

Կոչականի էական քերականական հատկանիշներից է նաև գերադասությունը: Հայտնի է, որ կոչականը լինում է միանդամ և բաղմանդամ: Բաղմանդամ կոչականի, որպես շարահյուսական մեկ միավորի, հիմքում ընկած է լինում միայն մեկ գերադաս անդամ, որն իր շուրջն է համախմբում լրացնող անդամներին: Շարահյուսական կառուցվածքի այդ գերադաս անդամը արտահայտվում է գոյականով կամ գոյականաբար առնված որևէ ածականով, թվականով, դերբայով և օժտված է մի քանի առանձնահատկություններով՝

ա) բաղմանդամ կոչականի գերադաս անդամը այն հիմնական, կարևոր միջուկն է, որը նշում, անվանում է այն անձը կամ անձնավորված իրը, որին դիմում են մի բան ասելու կամ հաղորդելու համար. այն կոչականի շարահյուսական կառուցվածքում ինքնուրույն, առանձին անդամ է:

բ) բաղմանդամ կոչականի գերադաս անդամը այդ շարահյուսական կառուցվածքի այն հիմնական միջուկն է, որին ուղղակի կամ միջնորդավորված կերպով լրացնում, պարզաբանում են մյուս անդամները:

գ) բաղմանդամ կոչականի գերադաս անդամը և իրեն լրացնող մյուս անդամները միմյանց նկատմամբ գտնվում են շարահյուսական կախվածության (որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, բացահայտիչ-բացահայտյալ) պայմաններում, որտեղ գերադաս անդամը մշտապես հանդես է գալիս որպես լրացյալ:

դ) կոչականի գերադաս անդամը մշտապես հանդես է գալիս գոյականի կամ գոյականաբար առնված այլ խոսքի մասի ուղղական հղովով:

ե) բաղմանդամ կոչականի գերադաս անդամը երբեք որոշիչ հոդ չի ընդունում, այն կարող է ընդունել ս և դ ստացական հոդերը:

Ստորագելություն.— Սա նույնպես համարում են կոչականի քերականական հատկանիշներից մեկը:

Ականավոր ուս լեզվաբան Ա. Ա. Շախմատովը (և էլի ուրիշներ) կռիակների որոշ տեսակներ համարում է հասուկ տիպի՝ կռիական նախադասություններ, հետևաբար և դրան էլ վերագրում է ստորոգման հատկա-
նիշը: Այսպիսի նախադասությունների մասին Շախմատովը գրում է. «Եթե Կոլյան արտասանվի մի ուժգին շեշտով և հանդիմանություն, դա-
րույթ կամ ամստանք կրող հնչերանգով, կդառնա կռիական նախադա-
սություն» և ավելացնում է, որ խոսողը Կոլյա-ն արտասանելուց հետո
պետք է արտասաներ նաև «այդ ի՞նչ արեցիր, ինչո՞ւ այդպես վարվե-
ցիր, բա ամբ չէ՞, մի՞թե կարելի է և նման արտահայտություն-
ներ»⁷:

Այսպիսի նախադասություններն ընդունված է կռել կռիական-ան-
վանական նախադասություններ, որոնք օժտված են հնչերանգային ստորոգումով⁸:

Բերենք անվանական-կռիական նախադասությունների բնագրային օրինակներ «Սամվել» վեպից, որտեղ Իշխանաց կղզում տեղի ունեցած հոր և որդու երկխոսության մեջ հայր, Սամվել և դավանան անվանական-
կռիական նախադասությունները թեև արտահայտված են մեկական բա-
ռերով, բայց օժտված են հնչերանգային ստորոգումով, արտաբերվում են ուժգին հնչերանգով և արտահայտում են մի դեպքում դարույթ, մյուս դեպքում՝ զարմանք, մի այլ դեպքում՝ ատելություն.

...Հայրը ոտքի ելավ, դառնացած կերպով ասելով.

— Իշուր կանցնի թե՛ քո աղաչանքը, և թե՛ քո խնդիրքը, Սամվել՝ Մերուժանը այն տեսակ մարդիկներից չէ, որ ամեն մի համբալի խոս-
քը լսե:

Արյունը կատաղի հոսանքով անցավ դեպի Սամվելի գլուխը:

— Հա՛յր, ...— ձայն տվեց նա, և նրա խոռվյալ աչքերը վառվեցան բարկության բոցով:— Ե՞ս եմ համբալի:

— Այո՛, դու ես, Սամվել՛,...

— Ուրեմն դու իմ որդին չես:...

— Եվ ոչ դու իմ հայրն ես:

— Սամվել՛...

— Ի՞նչ է, դավանա՛ն...

(Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 511):

⁷ А. А. Шахматов, Синтаксис русского языка, Л. 1941, ст. 261.

⁸ Այս մասին տե՛ս նաև Ս. Գյուլբուդաղյանի «Միակզմ նախադասությունները ժա-
մանակակից հայերենում», Երևան, 1967, էջ 158—161, Հ. Հարությունյանի «Անդամ
նախադասությունները ժամանակակից հայերենում», Երևան, 1970, էջ 45 և В. В. Бабаи-
цева, Односоставные предложения в современном русском языке, М., 1968,
էջ 154—159:

Կոչական-անվանական նախադասությունները իրենց հետ կարող են ունենալ ձայնարկություններ, ինչպես նաև լրացումներ: Ահա մի օրինակ 2. Թումանյանի «Խորհրդավոր ծերունին» հիշողությունից.

— Ի՞նչ տեսակ մարդիկ են նրանք, ի՞նչ գիտես նրանցից:

— Օ՛, շատ եմ ծիծաղել նրանց վրա:

— Վա՛յ, խեղճ պապեր:

— Ես պսակել եմ նրանց առաքինություններն ու մեծագործությունները:

— Ո՛վ բարի՛ ծերունի...

Կոչական-անվանական նախադասությունները առատորեն օգտագործվում են նաև նկարագրություններում, երբ խոսողը անձնավորում է որևէ իր կամ երևույթ և դիմում է դրանց: Ահա այդպիսի օրինակ՝ «Օ՛, ամենասո՛ւրբ տիրամայր, քո պատվին Հոռմում երկու նոր տաճար եմ կառուցել: Զենո՛վա, իմ Զենո՛վա, խեցի արևային, իրիկունը՝ ծիրանագույն (Շուլց, Քար և ցավ):

ԿՈՉԱԿԱՆՆԻ ՇԱՐԱՀԱՅՈՒՄԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ
ԱՐՏԱՀԱՅՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ինչպես արդեն ասվել է, կոչականներն ըստ կազմության լինում են միանդամ և բազմանդամ (ծավալուն): Կոչականի շարահյուսական կառուցվածքը պայմանավորված է այն հանգամանքով, թե տվյալ կոչականը խոսքի մեջ ինչ դեր է կատարում՝ զուտ հաղորդակցման, թե՞ դրա հետ նաև ոճական:

Եթե խոսողը դիմում է մեկին բողոքի, դիմումի, գանգատի կարգով, առանց հուզարտահայտչական երանդի, սառը ոճով, պարզապես նրան մի բան ասելու, հարցնելու, խնդրելու, այսինքն, երբ այդ դիմումը միայն հաղորդակցման դեր է կատարում, այդ դեպքում կոչականը սովորաբար միանդամ է լինում: Այսպիսի դեպքերում խոսողը դիմում է խոսակցին (կոչականին)՝ նշելով նրա անունը կամ ազգանունը, պաշտոնը, կոչումը, մասնագիտությունը, հասարակական պարտականությունը և այլն (դիմում է ընկեր, եղբայր, բժշկուհի, վարորդ, վաճառող, քաղաքացի, երիտասարդ, օրիորդ, տոմսավաճառ և նման բառերով):

Ներեցեք, բժշկուհի՛, այդ բուլդը ինչո՞ւ եք գրում (ՍԳ, 1978, 10, 64):
Ներխառա՛րդ, ներկայացումը հավանեցի՞ք (Սով. արվեստ, 1978, 8):

Ներեցեք, ինձ լավ չհասկացաք, օրի՛րդ (ԶԽ): Տոմսավաճա՛ռ, հայտնեցեք կանգառները:

Միանդամ կոչականը արտահայտվում է հատուկ կամ հասարակ գոյականների կամ գոյականաբար առնված այլ խոսքի մասերի ուղիղ ձևով և երբեք հոգ չի ընդունում:

Իսկ երբ խոսողը նպատակ ունի ինչ-որ հարգանքով, սիրով, փաղաք-
շական կամ հուզարտահայտչական այլ տոնով դիմել մեկին, այսինքն,
երբ այդ դիմումը ինչ-որ տեղ նաև ոճական արժեք է ձեռք բերում, այդ
դեպքում կոչականը դառնում է բազմամանրամ, այսինքն իր հետ ունենում
է լրացումներ. Վարպե՛տ Արտո, հիշո՞ւմ եք, ձմռանը գործարանում ենք
հանդիպել (ԳԹ, 1978, 8, 2): Այո, սիրելի՛ Մարգարիտ, սա մի նոր հոգե-
բանական գրոհ է (Շիրվ. ՊՂ): Առաջ եկ, լավի՛ւն աղջիկս: Դու էլ արի,
պատվելի՛ ֆեռի (նույն տեղում): Բացվեցե՛ք, հայրենիքի՛ շքե՛ղ առավոտ-
ներ (Գ. Սարյան):

Բազմամանրամ կոչականները առավելապես լինում են երկրառ կամ
եռաբառ: Հանդիպում են նաև ավելի ծավալուն կոչականներ. (որոշ կա-
ռույցներում ծավալուն կոչականի անդամների թիվը հասնում է
8—10-ի):

Բազմամանրամ կոչականը փաստորեն շարահյուսական մի կառույց-
վածք է, մի ազատ բառակապակցություն. նրա գերադաս անդամը կամ
միջուկը (արտահայտված գոյականով կամ գոյականաբար առնված այլ
խոսքի մասով) ունի իրեն լրացնող անդամները: Կոչականի գերադաս
անդամին լրացնող բառերը պարզաբանում, որոշակի են դարձնում այն
անձը կամ առարկան, որին դիմում է խոսողը. առանց այդ լրացնող,
պարզաբանող բառերի անորոշ է մնում կոչականի ով կամ ինչ լինելը:
Այսպես, օրինակ՝ «Բարի գալուստ, բարեկամնե՛ր» նախադասության մեջ
խիստ անորոշ է, թե ովքեր են այդ բարեկամները, այդ անորոշությունը
մասամբ վերանում է, երբ բարեկամնե՛ր կոչականին վերագրվում են մի
երկու լրացնող բառեր՝ «Բարի գալուստ, մեր քանկագի՛ն բարեկամներ»: Սակայն, երբ այս բազմամանրամ կոչականին վերագրում ենք տեղ ցույց
տվող որևէ լրացում, արդեն շատ որոշակի է դառնում կոչականի գերու-
դաս անդամը՝ «Բարի գալուստ, մեր քանկագի՛ն վիետնամցի բարեկամ-
ներ» (ՍՀ, 19.12.1973):

Բազմամանրամ կոչականի լրացումները բաժանվում են երկու խմբի՝

ա) բառեր, որոնք լրացնում են ծավալուն կոչականի գերադաս ան-
դամին. սա առաջին կարգի կամ առաջին աստիճանի ընդարձակում (ծա-
վալում) է, իսկ լրացնող բառերը՝ առաջին կարգի լրացումներ:

բ) լրացումներ, որոնք պարզաբանում են կոչականին լրացնող բա-
ռերի իմաստը. սա էլ երկրորդ կարգի կամ երկրորդ աստիճանի ընդար-
ձակում (ծավալում) է, իսկ լրացման լրացումները պարզաբանող բա-
ռերը՝ երրորդ կարգի ընդարձակում և այլն⁹

է) Մանթաշի նիշո՛ւն հավֆեր,

իմ դարդս որ ձերն եղնեղ,

⁹ Տե՛ս В. П. Проничев, Синтаксис обращения, Л. 1971, էջ 46:

Ձեր էդ զառ-վառ խառ փետուրներ
Կսենային, քանց գիշեր (Ավ. Իսահակյան):

Այս բաղմանդամ կոշականի գերադաս անդամը հավֆեր բառն է,
նրա լրացումը՝ նխշուն որոշիչը. սա առաջին աստիճանի ծավալում է՝
նխշուն հավֆեր. այս կապակցությանն է լրացնում Մանթաշի հատկա-
ցույցիչը, որը երկրորդ կարգի լրացում է, որի միջոցով կոշականը ձեռք է
բերել երկրորդ աստիճանի ծավալում

Մանթաշի նխշուն հավֆեր...

Բերենք ուրիշ օրինակներ.

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ, հին ու նոր,

Արի՛, բարի՛ ընկերներ... (ՀԲ):

Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,

Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ նաիրյան զալա՛ր բարդի (Հ. Սահյան):

Առաջին նախադասության մեջ ընկերներ կոշականն ունի հին ու նոր և
արի, բարի բաղմակի որոշիչները. այստեղ կա միայն առաջին աստիճանի
ծավալում: Երկրորդ նախադասության մեջ կան նաև երկրորդ և երրորդ
աստիճանի ծավալումներ: Կոշականի բարդի գերադաս անդամին լրաց-
նում է զալա՛ր որոշիչը, սրանց էլ՝ նաիրյանը, իսկ ամբողջ կապակցու-
թյանն էլ՝ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ կրկնվող որոշիչները, որոնք փաստո-
րեն երրորդ կարգի լրացումներ են: Իմ հատկացուցիչը այստեղ բարդի
կոշականի համար նույնպես առաջին աստիճանի լրացում է, որովհետև
այն անմիջապես կապվում է գերադաս անդամի հետ, թեև նրանից ընդ-
միջվել է մի քանի որոշիչներով:

Երրորդ աստիճանի ծավալում ունի նաև՝ «կապույտ երկնքի ոսկեղեն՝
ստողեր, Ձեր հեռվից դուք միշտ տեսնում եք նրան» (Վ. Տերյան) նախա-
դասության կոշական կապակցությունը:

Բաղմանդամ կոշականի գերադաս անդամը հիմնականում արտա-
հայտվում է գոյականով. այն կարող է արտահայտվել նաև այլ խոսքի
մասերով, որոնք գոյականաբար են առնվում:

Գոյականով արտահայտված կամ գոյականաբար առնված գերադաս
անդամը ունենում է պարզաբանող լրացումներ. դրանք կարող են լի-
նել՝

1) որոշիչներ, արտահայտված՝ ա) հիմնականում՝ որակական և
նրանից ավելի պակաս՝ հարաբերական ածականներով, որոնք գերադաս

կոշականի նկատմամբ կարող են և՛ նախադաս գործածվել, և՛ վերջադաս
և իրենց հերթին կարող են ունենալ երկրորդ կարգի լրացումներ.

Արդյոք ո՞ւր ես դու, իմ անո՛ւշ երազ (Վ. Տերյան):

Դու քաղցր ես, հո՛ղ իմ հայրենի... (Ն. Զարյան):

Իսկ դու երբ պիտի ժպտաս, իմ խղճո՛ւկ սիրտ վիրավոր (Ավ.
Իսահակյան):

Լեռնայի՛ն ծաղիկներ, հսկեցեք նրան...

բ) կոշականի գոյական գերադաս անդամը կարող է ունենալ նաև
դերբայներով արտահայտված որոշիչներ. որպես որոշիչներ կարող են
հանդես գալ հարակատար, ենթակայական և անորոշ (սեռական հոլով)
դերբայները.

Դադրա՛ծ, բեզարա՛ծ յար ջան,

Ամպերն ելան, դե արի՛ (Ավ. Իսահակյան):

Ինչո՞ւ ես հիշում, հեռացա՛ծ ընկեր,

Մոռացա՛ծ ընկեր, ինչո՞ւ ես հիշում (Վ. Տերյան):

Վազո՛ղ տղա, մոտեցիր մարզիկին (Հայաստ. ֆիզկ.): Դեպի երկինք
ցայտող շատրվանե՛նք, զգո՞ւմ եք արդյոք սրտիս զովությունը (Հայրենի-
քի ձայն):

Օ՛, գարնա՛ն ամիս, ապրելո՛ւ ապրիլ... (Ս. Կապուտիկյան):

գ) թվականներով, որոնք կարող են և՛ նախադաս գործածվել, և՛
ետադաս.

— Ներիր, Լիլի՛թ առաջին, — ասում եմ ես, աղջկան մոտենալու (Վ. Պ. Պ. Ս.):

— Ինձ թվում է, դու լավ տղա ես, Կարե՛ն 13-րդ (նույն տեղում):

Ինճերո՛րդ բրիգադ, ավելի բարձր արդյունքներ էինք սպասում:

դ) գոյականի ուղղական, սեռական, բացառական, գործիական հո-
լովներով.

Աստվածամա՛յր, մայր իմ, դու հեզ,

Ձունես շարի ոչ մի թեկ (Շիրազ):

Դե, մնաս բարով, ծերունի՛ հայրիկ (Հ. Թումանյան):

Ծկ, գարնա՛ն անձրև, թափվիր հորդառատ (Ա. Մատուրյան):

— Հազար բարի, Ձեճո՛վ Գասպար (ՍԳ, 1978, 10, 24):

...Այ համո՛վ աղջիկ, այ ծամո՛վ աղջիկ... (Ժող. երգ):

2) Գոյականով արտահայտված գերադաս անդամը կարող է ունենալ նաև առաջին կարգի հատկացուցիչ լրացում՝ արտահայտված գոյականով կամ դերանվամբ.

Ես ձեզ եմ դիմում, աշխարհի՛ մարդիկ (Գ. էմին)...

Հայո՛ց արքա, հայա՛րա արքա,

Ինչ-որ երգ է գալիս դրսից.

Մի պահ ականջ արա երգին (Վ. Դավթյան):

Շատ համեղ ես դու, Երեանի՛ ջուր (Ժող. երգ):

Ավելի հաճախ բաղմանդամ կոչականի գերադաս անդամը միաժամանակ ունենում է և՛ որոշիչ, և՛ հատկացուցիչ լրացումներ, ըստ որում հատկացուցիչը կարող է որոշիչից և՛ առաջ, և՛ հետո դրվել, բայց միշտ վերագրվել գերադաս անդամին.

Օրինակներ՝

Մա՛յր իմ ժողովուրդ, դեպի քեզ կգամ (Ավ. Իսահակյան):

Մեկամղձո՛ւտ լնակ իմ, քեզ հետ ըլլանք մտերիմ (Դուրյան):

Օ՛, ծանր հոգսերի խղճո՛ւկ գավակներ,

Որքան համբերող, քաջ է ձեր հոգին (Ալ. Մատուրյան):

3) Բաղմանդամ կոչականի գոյականով արտահայտված գերադաս անդամը կարող է ունենալ նաև բացահայտիչ լրացում, որը ավելի է պարզաբանում այն անձը կամ առարկան, որին դիմում է խոսողը, գրողը.

Մենավո՛ր իմ սիրտ՝ մոլորվա՛ծ թռչուն:

Կարոտիդ կանչը չի հասնի նրան (Վ. Տերյան):

Հրա՛շք աղջիկ, գիշերների՛ թագումի,

Ճառագայթող քո աչքերով դու եկար (Վ. Տերյան):

Հա՛, հա՛, հա՛, Շապո՛ւմ, արքայի՛ց արքա,

Հա՛, հա՛, հա՛, Շապո՛ւմ, արյա՛ց թագավոր,

Այդ ո՛ւր ես այդպես սուրում քաջածի (Վ. Դավթյան):

Երեան՝ իմ բարի՛ ֆաղաֆ, Երեան՝ իմ ֆարի՛ ֆաղաֆ... (Ժող. երգ):

Կապակցությամբ արտահայտված կոչականի գոյական գերադաս անդամը կարող է ունենալ բառակապակցություններով (այդ թվում նաև դերբայական դարձվածներով արտահայտված) լրացումներ.

իմ հա՛յ ժողովուրդ, իմ բազմաշնորհ,
Աշխարհի այգու մի ծայրում բուսած
Ընկուզենի դարավոր ու նոր (Ս. Կապուտիկյան):

Կարմիր ու կապույտ ժապավեններով զարդարված մեքենայի վա-
րո՛րդ, ազատիր ճանապարհը: Բարձրահարկ շենքի առաջին մուտքի մոտ
կանգնած փոքրի՛կ տղա, դիմացի մեքենայից բեղ են կանչում:

Կոշականը (խսկ եթե այն բազմանդամ է, նրա գերադաս անդամը)
կարող է արտահայտված լինել նաև այլ խոսքի մասերով՝ ածականով,
թվականով, դերանվամբ, դերբայներով, բառակապակցություններով և
այլևայլ արտահայտություններով, որոնք իրենց մեջ համատեղում են նաև
գոյականի իմաստ և կարող են հանդես գալ նաև փոխաբերական կիրա-
ռությամբ:

1) Ածականով.— ածականները որպես կոշականներ ավելի սակավ
կիրառություն ունեն. դրանք խոսքի մեջ կոշականի դեր են կատարում
հիմնականում երկու դեպքում.

ա) երբ խոսողը խնդրողի դերում է և խոսակցին դիմում է փաղաք-
շական, սիրալիր հնչերանգով և մեծ մասամբ ածականով արտահայտված
կոշականի հետ գործածում է ջան բառը (Փոքրի՛կ ջան, հայրիկիդ կան-
չիր: Մի բաժակ ջուր տուր, սիրո՛ւն ջան: Կմրսես, անուշի՛կ ջան, տուն
արի և այլն):

Ջան բառին նման դեպքերում համարժեք է ստացական հոդը¹⁰
(Փոքրիկս, անուշիկս, թմբլիկս, սիրունիկս, նազելիս, սիրելիս—Բարձր են
երկնի ձեղունները, ճագելի՛ս, բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից—
Ավ. Իսահակյան: Դու նայեցիր, սիրելի՛ս, սև, արցունքոտ աչքերով...—
Դեմ):

Իհարկե, նման դեպքում ածականները կոշականներ են դառնում նաև
առանց ա-ի և ջան-ի, սակայն այս դեպքում էլ դրանց փոխարինում է իկ-
փաղաքշական ածանցը (Փոքրի՛կ, արտասանիր սովորածդ ոտանավորը:
Անուշի՛կ, մոտ արի):

Նման սիրալիր արտահայտությունների դեպքում ածական կոշականը
կարող է հանդես գալ նաև իմ դերանվան հետ, որն այս դեպքում կապ
չունի հատկացուցիչ անդամի հետ. այն ձեռք է բերում փաղաքշականի
իմաստ.

Թե վիրավորվես մարտում, իմ անգի՛ն,
Այդ մասին գրիր ժամանակին (Ավանգարդ, 1978, 8, 10):

¹⁰ Այսպիսի դեպքերում Ս հոդը ստացականության հետ ձեռք է բերում նաև փա-
ղաքշական երանգ:

Մի՛ մոռալվիր, ի՛մ սիրելի, թե հոգնել ես, էլ մի մնա... (Ս. Կապուտիկյան):

բ) Ածականը կոչականի դեր է կատարում նաև այն դեպքում, երբ խոսողը խոսակցին դիմում է վերաբերելու, հանդիմանելու, անարգելու համար (Գարշելի՛, ինչո՞ւ այդպես վարվեցիր: Զգվելի՛, կորիր այստեղից: Անամո՛ք, մեծերին հարգել չգիտես: Հիմա՛ր, մի՞թե դա էլ չես հասկանում (ՎՊԴԱ):

— Դմբո՛, ժամացույցդ թող, ախր ես ժամանակ շատ ունեմ:

— Դո՛դ, ես կարող էի քեզ ժամանակ պարտք տալ (Գարուն, 1978, 9):

Դե իմ անունով երգվիր, անգգա՛մ,

Որ էլ Սարգիսն դու չես սիրելու (ՀԹ. Անուշ):

2) Կոչականի դերում, շատ սակավ դեպքերում, կարող են հանդես գալ նաև դասական ու քանակական թվականները՝ նույնպես գոյականաբար գործածվելիս. Առաջի՛ն, դանդաղեցրու քայլերդ, երկո՛ւրդ, իսկ դու՛ արագացրու, որ հավասարվեք: Զահր վաճառված է, էյ չոքս հաբյուր հի՛նգ, մուծի՛ր դրամը և ստացի՛ր քո ապրանքը (Սով. Գր., 1978, 3, 10):

3) Դերանուններից որպես կոչականներ կարող են հանդես գալ միայն անձնական դերանվան եզակի և հոգնակի թվերը՝ դու և դուք: Պատճառն այն է, որ խոսողը կոչականին դիմում է որպես խոսակցի, որին էլ հատուկ է երկրորդ դեմքի բերականական կարգը: Նման դեպքում այդ կոչականները չպետք է շփոթել նույն դերանուններով արտահայտված ենթակաների հետ, որոնց ստորոգվում է գործողություն կամ հատկանիշ: Համեմատենք՝

Ես կգամ, երբ դու մենակ կմնաս (Վ. Տերյան):

Դու փրփուր ու պուրպուր մի աղջիկ ես (Զարենց):

Դուք էլ ինձ հետ ձեն տվեք,

Իմ դարդերի թա՛յ սարեր (ՀԹ, Անուշ):

Բերված նախադասություններում գործածված դու և դուք ենթականերանուններից (թե՛ իրենց դերով և թե՛ իմաստով) տարբերվում են նույն դերանունների հետևյալ կիրառությունները՝

Սուտ ես ասում, դու խաբեբա... Կորի՛ զնա, դու շա՛ր ազվես... (ՀԹ):

Ծո՛ւլ դու ժպտուն, հրաշատեսի՛լ կապույտ ծով,

Աչքերս ի քեզ հառած մնամ ժամերով (Մկրտիչ Աճեմյան):

Դու իմ վերջի՛ն, իրիկնայի՛ն, աստվածայի՛ն քույր (Չարենց):
Դու՛ հի՛ն, հնամյա՛, դու բիբլիական,
Ու հո՛ր Երեւան՝ պատմությամբ լի... (Ս. Կապուտիկյան):
Դուի, վեհ վկաներ մեր անմահ փառքի,
Մեր ստեղծագործ հոգու հանճարի... (Ավ. Իսահակյան):

Այս օրինակներում դու և դուի դերանունները պարզապես ցույց են տալիս այն առարկաները, որոնց միջոցով խոսողը դիմում է որևէ առարկայի՝ իր հույզերն ու զգացմունքները արտահայտելու համար:

Այսպիսի դերանուններից առաջ հաճախ գործածվում են ձայնարկություններ:

Ա՛խ դու կկո՛ւ, հիմա՛ր կկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու...
Ա՛յ դու կոկոս՛ն, շաբալեզո՛ւ... (ՀԹ, Չարի վերջը)
Է՛յ դու մահվան անմահ աշխարհ,
Դերեւմանի պես տխուր... (Ավ. Իսահակյան):

Քանի որ դերանունն ունի ընդհանուր, շտաբերակված իմաստ, այդ պատճառով էլ գրողը իր խոսակցին ավելի որոշակի ու շոշափելի դարձնելու համար հաճախ բացահայտում է, թե ով կամ ինչ է իր դիմած դերանուն-կոչականը.

Վառ ու հզոր քո ապագան կայծակում է իմ դեմ,
Դու՛ հավերժո՛ղ իմ Հայաստան, անուն քաղցր ու վսեմ (Ավ. Իսահակյան):

Իմ սո՛ւրբ մանկիկ, թող համբուրեմ
Թաթիկներդ ցեխոտած,
Դու՛ կյանք ու սեր, ծափ ու ծիծաղ,
Ուրախության դու աստված (Ավ. Իսահակյան):

...Ինչպե՞ս շտիրեմ—հեղությամբ լցված

Դու յոթնապատի՛կ խոցված տիրամայր (Վ. Տերյան):

4) Ընդունված ձև է նաև (սա ավելի շատ հատուկ է բանավոր խոսքին, այն էլ՝ հիմնականում հասարակաբանությանը) խոսակցին տեղանունով կոչելը: Այս դեպքում խոսողին լիովին հայտնի է, թե ինքը ում է ուղղում իր խոսքը, ում է դիմում, թեև նրա անունը չի տալիս.

— Դու քանի՞ գլխանի ես, որ Հացավանի կանանց վրա ձեռ ես բարձրացնում, մեղրաձորցի՛... Լամբարյանին դիմում է Մացակ Ավագյանը (ՆԶԶ):

...Մի ցույց տվեք խփողին , ա՛յ բարեկամներ, ա՛յ հացավանցիք (նույն տեղում):

— Այլ լեւինականցի, բաւական չեղաւ գլուխ գոլես: Սասունցիներ, դե
ձեղ տեսնեմ:

Երբեմն էլ խոսակցին, որպէս կոշականի, դիմում են՝ նրա աղջու-
թյունը հիշելով:

...Կարող էի, հոռո՛ւմ, սակայն չարի, զի մենք
Սովորություն չունենք զարկել զարկված մարդուն
եւ ընկածին տանել...

Ու ես չարի, հոռո՛ւմ (վ. Դավթյան):

Գյուղի երեսաները վազելով զինվորականների հետեւից ուրախ-
ուրախ աղաղակում էին:

— Ռո՛ւս, դրաստի, ու՛ր, դրաստի (Չ. Մկրտչյան):
Նեգրի ուղի, նե՛գր, բո՛ւս ես ինձ (Ռ. Դավթյան):

(5) Կոշականներ են դառնում նաև ցանկացած բաներ ու բառակա-
պակցութիւններ, որոնք կարող են հանդես գալ թե՛ եզակի և թե՛ հոգ-
նակի թվերով:

Դու օգտվեցիր, թվաբանություն (Պարույր Սևակ):

Սե՛ր, մնաս բարով, էլ քեզ չեմ նայի (Ավ. Իսահակյան):

— Ա՛խ, մանկավարժությա՛ն աստված, ինչ դարձրինք քո տաճարը
(Գարուն, 1978, 9):

Տունդ լցրել ես, ուռչում ես, տրաքվում ես, ընկե՛ր ֆերմայի վարիչ
(ՍԳ, 1978, 10):

Ժամի գմբեթից ներքև են ընկել

Իրիկնամուտի սովերնիորը թեք,

Օ՛, իմ խաղերի ուրախ ընկերներ,

Այլևս ես ձեզ չեմ տեսնի երբեք (Ս. Նսենին):

6) Եւ վերջապէս, կոշականներ կարող են դառնալ նույնիսկ առան-
ձին անվանումներ ու արտահայտութիւններ:

Մտտեցիր գրատախտակին, Ապարանի վերջին մոնիկա՛ն:

Ժամացույցի ժանգոտված մեխանի՛զմ, դե չու՛ծիր այս խնդիրը:

Օ՛, բնության ճիւղաւի ստեղծագործություն, դու բոլորին շատ շու-
տով խելքահան կանես:

Այ դու դարմանի տակի ջո՛ւր, մտքումդ բան ես ունեցել, հա՛ (Պը-
ռոշյան):

Գեղարվեստական գրականության մեջ և բանավոր խոսքում գրողը և խոսողը կոչականներին դիմում են իրենց մտքերը, հույզերն ու տրամադրությունները արտահայտելու, ինչպես նաև խոսքը ավելի կենդանի ու աշխույժ, արտահայտիչ ու ուշադրության արժանի դարձնելու համար:

Կոչականը ոճավորում է խոսքը, այն օժտում հուղարտահայտչական երանգավորումով: Ահա հենց այս նպատակով է, որ ավելի հաճախ խոսքի մեջ կոչականները հանդես են գալիս իրենց լրացնող բառերի՝ լրացումների հետ. կոչականների հետ գործածվում են նաև զանազան ձայնարկություններ ու եղանակավորող բառեր: Կապակցվելով այդպիսի բառերի հետ, կոչականը շաբաձուսակա՞ն կառույցը գրավոր խոսքին հաղորդում է բազմազան երանգավորող նրբերանգներ, իսկ բանավոր խոսքում դրանք դրսևորվում են առանձնացող հնչերանգով:

Կոչականի գործառական ոլորտները բազմազան են ու բազմաբնույթ: Կյանքի ցանկացած բնագավառի համար (լինի դա գիտահետազոտական հիմնարկություն, ուսումնական հաստատություն, բժշկություն, մրշակութային կյանք, արտադրություն, գյուղատնտեսություն, շինարարություն, հրապարակախոսություն, զինվորական ծառայություն, տրանսպորտ, առևտուր և այլն) մարդիկ մշակել են իրար հետ հաղորդակցվելու յուրահատուկ ոճ և որպես կոչականներ գործածում են սովյալ բնագավառին յուրահատուկ բառեր ու արտահայտություններ:

Ըստ այդմ էլ կոչականների ոճական դրսևորումների ոլորտները տարբեր են ու բազմազան.

1. Վարչագործառական ոճերում (այսինքն, երբ խոսքը պաշտոնական բնույթ է կրում և հանդես է գալիս պաշտոնական գրագրությունների մեջ) գործնական գրություններում, կոչելում, դիմումներում, հրամանագրերում, հրապարակախոսության մեջ կոչականներ լինում են՝

ա) անուն, ազգանուն, հայրանունները (կոչականի այսպիսի դրսևորումը հատուկ է հիմնականում բանավոր խոսքին): Երբ խոսակցությունը պաշտոնական բնույթ է կրում, հաղորդակցվողները սովորաբար իրար են դիմում անուն-հայրանունով¹.

¹ Հայերենում զարմանալի կերպով լայն տարածում է ստացել արական և իգական սեռերի անձնավորություններին հայրանվամբ կոչելիս ուսական հայրանվանական վերջավորություններ վերագրելը (Արամ Աշոտիչ, Արմենուհի Արշակունյա):

— Լեոն Տիգրանիչ, խնդրում եմ համապատասխան կարգադրություն անել:

— Աշոտ Արամիչ, կարգադրությունը վաղուց է արված (Զհ):

Իսկ եթե անուն-հայրանունով չեն դիմում, ապա անվան կամ ազգանվան հետ գործածում են ընկեր բառը (ընկե՛ր վարդանյան, ընկե՛ր Լեոնյան, ընկե՛ր Հասմիկ, ընկե՛ր Լեոն):

բ) Մասնագիտությունների, պաշտոնների, զբաղմունքների անվանումները (այս անվանումների հետ նույնպես հաճախ գործածվում է ընկեր բառը—Ընկե՛ր հրամանատար, հանձնարարությունը կատարված է: Ընկե՛ր ուսուցիչներ, մի մոռանաք, որ դուք վեհ ու պատվավոր աշխատանք եք կատարում: Հարցը ճիշտ հասկացեք, ընկե՛ր ինժեներ: Այս հարցում դուք ճիշտ չեք, ընկե՛ր պետ):

Որոշ մասնագիտությունների անվանումների հետ ընկեր բառը սովորաբար չի գործածվում (վարորդ, տոմսավաճառ, հաճախորդ, գնորդ և այլն). միայն եզակի դեպքերում, ինչ-ինչ նպատակներով են այս դեպքում դիմում ընկեր բառին:

գ) Վարչագործառական այլ ոճերում (կոչեր, ճառեր, զեկուցումներ) կոչականներ գործածելը, դրանք կոչականներով սկսելը սովորական բանաձև է դարձել (обычная формула)²: Հոետորական ոճում մի տեսակ հատուկ, հոետորական շեշտ են ստանում և առանձնահատուկ հնչերանգով են արտաբերվում ընկերներ, քանկագին ընկերներ, բարեկամներ, հարգելի բարեկամներ, քանկագին հյուրեր (հնում՝ տիկնայք և պարունայք) կոչականները: Սա այնքան տարածված երևույթ է, որ կարելի է բավարարվել մի երկու օրինակով.

Քանկագի՛ն ընկերներ, բարեկամներ, այսօր մեծ ու լուսավոր տոն է եղբայրական Հայաստանում... (ՍՀ, 1978, 15, 10, է. Ա. Շեվարդնաձեի ճառից):

Քանկագի՛ն ընկերներ, հենց նոր մենք ձեզ հետ մեկտեղ դարձանք պատմական ակտի վկաներն ու մասնակիցները (նույն տեղում, Կ. Դիմիրճյանի ճառից):

— Ընկերներ՛, էն ինչ որ էստեղ խոսեցին, էդ բոլորը կեղծ է (Ս. Զորյան, «Դրադարանի ձղջիկը»):

Կոչերն էլ սկսվում են այնպիսի կոչականներով, ում որ դիմում են ամբիոնից. Դիտուքյան և բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատողներ՛, պայքարեցեք գիտության հետագա ծաղկման, տեխնիկական առաջադիմության համար (ՍՀ, 14, 10, 1978):

² См. Грамматика русского языка, том II, Синтаксис часть II, под. ред. В. Виноградовой, М., 1954.

Իրավաբանական ոճերում որպես կոչական լայնորեն է գործածվում ֆաղափացի բառը.

— Քաղաքացի՝ Լամբարյան Լևոն, դուք ձեզ մեղավոր ճանաչո՞ւմ եք:

— Ոչ,— պատասխանեց Լևոնը:

— Իսկ դուք, Քաղաքացուհի՝ Արուսյակ Լամբարյան, հանցավոր համարո՞ւմ եք ձեզ: (ՆՁԶ):

2) Առօրյա-խոսակցական ոճերում կոչականները հանդես են գալիս.

ա) որպես ընտանեկան, բարեկամական, աղակցական կապերի անվանումներ³.

— Հայրի՛կ, Ի՞նչն է քեզ այդպես տանջում (ՇՊԶ): Մայրի՛կ, զրսպիր նրան (Ն. տ.):

Քեռի՛, մայրիկն ուզում է քեզ տեսնել (Ն. տ.): Պապի՛կ, հայրիկը ե՞րբ է գալու:

— Մոռա՛մո՛ւյր, մի օր էլ դուք եկեք մեզ մոտ,— ասաց Սարգսի կինը (ԶԽ):

բ) Խոսքը ոճավորելու, խոսողի ներքին դատողություններն ու խոսակցի նկատմամբ ունեցած սիրալիրությունն արտահայտելու համար խոսողը որպես կոչականներ օգտագործում է հարգալից ու փառաբանական բառերը, մտերմական արտահայտությունները. այդպիսի բառերից ու արտահայտություններից հետո հայերենում սովորաբար գործածվում է ս փառաբանական հոդը⁴. «Դուք չեք կարող երևակայել, ջանիկնե՛րս, թե ինչքան եմ ձեզ կարոտել»... «Սիրելիս, ջանիկս, թանկագինս, անուշիկս, բալիկս, իմ ջանիկ-մանիկներս... (Հ. Թումանյան, Եժ, հ. 4, էջ 426):

— Աղավնյա՛կս, ո՛ւր էիր չքվել (ՎՊԴԱ):

...Ի՞նչ խաբար է, սանի՛կս, զարմանում եմ, ջանի՛կս,

Զաշխատեցի՞ր ամառը, ասա, Ի՞նչն էր պատճառը (Կոկիով):

Թեև հնացած ձև է, բայց խոսքի հուղարտահայտչական երանգը ավելի ընդգծելու, խոսակցին չափազանց սրտամոտ լինելու հանգամանքը

3 Շատ հաճախ բանավոր խոսքում (ավելի սակավ գրավորում) ընտանեկան, բարեկամական, աղակցական, կապերի անվանումներ արտահայտող բառերը (հայրիկ, մայրիկ, քույրիկ, եղբայր, հորաքույր, մորաքույր, քեռի և այլն) որպես կոչականներ գործածվում են ոչ իրենց իսկական նշանակությամբ:

4 Հետաճեկան, բարեկամական հարաբերություններ արտահայտող կոչականներից աղա, աղջիկ, զավակ (ինչպես նաև բարբառային հեր, մեր, քուր, ախպեր) բառերը նույնպես գործածվում են Ս փառաբանական հոդով. օրինակ՝ լզիտեմ, աղաս, օր կա՝ կյանք արժե, կյանք կա՝ օր էլ չարժե (ՍԳ, 1978, 10): Խելոք ես ասում, աղջիկս, դու հազար անգամ խելոք ես (Ն. տ.):— Ի՞նչ կարող եմ անել, զավակս (ՇՊԶ):

— Այ եհես, այ մհես, ժամանակները փոխվել են: Ախպես, այդպես չի լինի:

շէշտակու համար կոշականը հրեմն էլ կարող է ստանալ նաև դ դիմորոշ հողը.

Սիրելի՛ Զիվան, ընկե՛րդ իմ հոգու,
Մարդկային սիրտը հասկանում ես դու (ՀԹ):

Քեզ ասեմ, Մուշե՛ղ, որդի՛ վասակա,
Քեզ ասեմ, հայոց ֆա՛ջ սպարապետ,
Քեզ ասեմ, արի՛ղ ու կոշեմ ոխի (Վ. Դավթյան):

Դ դիմորոշ հողը կոշականների հետ գործածության մեկ ուրիշ դեպք էլ ունի. դա այն է, երբ խոսողը ատելությունը է լցված իր խոսակցի նկատմամբ և ցանկանում է ավելի ստորացնել նրան: Ահա այսպիսի ոճով է դիմում Անտոնիոսը հայոց շղթայակապ Արտավազը արքային.

—Հանդգնեցի՞ր, սառ՛ր արմեն,
Հանդգնեցի՞ր, սառն՛ւկդ նենգ,
Հանդգնեցի՞ր իմ կյանքի դեմ ու թագուհու (Վ. Դավթյան):

Ապա՝

Աղավնին եր թռան աչ ու ձախից.

—Գլուխ թեքիր, արմեն...

Բարբարո՛ւղ, թեքիր...

Թեքիր Էլենպատրա արեգակի առաջ (նույն տեղում):

Սիրաշիր ու փաղաքշական բառերի հետ, հատկապես բանավոր խոսքում, լայն տարածում ունի ջան բառը, որը գործածվում է կոշականի մտերմությունը ավելի ընդգծելու համար. այն դրվում է թե՛ անձնանունների և թե՛ փաղաքշական բառերի հետ. Բան չկա, բալա՛ ջան, հիմի ո՞վ է իրա խելքով ընդունվում (ՎՊԴԱ): Մայրի՛կ ջան, դեռ ինձ հարկավոր է շատ բան կարդալ... էդ բոլորը մենք չենք տեսնում, Վիկտոր՛ր ջան (Ստ. Զորյան): Չեն թողնում, որ նորը կառուցենք, տղա՛ ջան (ԶԽ):

Ջան բառը հանդես է դալիս գրեթե բոլոր կոշականների հետ և շատ լայն տարածում է ստացել⁵, բանավոր խոսքից էլ անցել է գրավորին:

⁵ Վ. Առաքելյանը ջան բառը որոշ կապակցություններում առանձին կոշական է համարում (Ամռան անուշ հուրհրացող տոթ ես, ջան—ԵԶ): Նույն բառը կոշականներից առաջ որոշիչ է համարում (է՛յ, ջան սարեր, Սասման սարեր—ՀԹ: է՛յ, ջան-հայրենիք, Ինչքան սիրուն ես-Ավ. Իս): Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 2, էջ 425:

Այն ավելի շատ ազիզ բառի հետ է գործածվում (Բաց չեմ թողնի, Լևոն ջան, ազի՛զ ջան, — շարունակեց Անուշը:— Նջ, Հացավան): Ազի՛զ ջան, շուտ կգաս (Ձե):

Ազիզ բառն էլ իր հերթին մեկ ուրիշ կոշականի համար կարող է որոշիչ դառնալ (ազիզ ընկեր, ազիզ բալա, ազիզ ախպեր, ազիզ յար և այլն):

գ) Կոշականներ են դառնում նաև վարքագծի, հատկանիշների, բրնավորության գծերի (Թե՛ դրական և թե՛ բացասական), սեռի, հասակի, տարիքի անվանումներ, նույնիսկ ֆիզիկական արատներ ու թերություններ անվանող բառերը, այդպես էլ՝ ծաղրական բառերը ու հանդիմանական, վիրավորական մակդիրները.

...Անամո՛ք, անի՛րա՛վ, չէ՞ որ ես տեսել եմ այդ ֆիլմը: Տգե՛տ, չեղա՛մ մի դեպք, որ խելացի բան ասեիր: Դմբո՛, միևնույն է, չես հասկանա (Ձե): — Լկտի՛, անպատկա՛ռ, փոխանակ լաց լինի, ներողություն խնդրի... (Գարուն, 1978, 9):

— Ապո՛ւշ, ինչո՞ւ չես դանդահարել... Գի՛ժ, մեզ մոտ միասին կլինեն (ՎՊ ԴԱ):

Տղա՛, հեռացիր այստեղից: Աղչի՛, ինչ ես խոսում: Փոքրի՛կ, մոտ արի:

դ) Կոշականները առատությամբ են գործածվում նամակադրություններում. այստեղ նույնպես դրանց գործածությունը սովորական բանաձևի տեսք է ստացել, որովհետև, գրեթե չկա նամակ, որտեղ կոշականներ չլինեն. և սա բնական է, որովհետև նամակը գրավոր դիմում է խոսակցին, առանց որի անունը տալու կամ որևէ սիրալիք, փաղաքշական բառերով դիմելու, հնարավոր չէ հաղորդակցումը: Նամակներում որպես կոշականներ հանդես են գալիս անձնանունները և սովորաբար իրենց հետ ունենում են ջան, սիրելի, քանկազին, հարգելի և նման բառեր: Բերենք այդպիսի տողեր տարբեր նամակներից. «Այս օրերին շարունակ պատրաստվում էի գրել Ձեզ, սիրելի՛ Անտյա, ի պատասխան Ձեր հունվարի մեկի նամակի»: «Մի բարկացեք, սիրելի՛ Անտենկա, որ այդպես երկար չէի պատասխանում Ձեր նամակին» (Վ. Տերյանի նամակներից): «Անգի՛ն Բուրիկ, եղբայրս՝ Գրիգորը, մեռավ»: «Հարգելի՛ս, ներիր հպարտությանս համար» (Ն—Դ, Աննա Սարոյան): Ավելի մտերմական նամակներում շատ գործածական է ջան բառը. «Իմ սիրելի՛ ուղի Գիֆո՛ր ջան: Ի քաղաքն Թիֆլիզ...» (ՀԹ, Գրեորը): «Հայրի՛կ ջան, ես շատ լավ եմ, քննությունները հաջող եմ հանձնում: Մի քիչ փող ուղարկի» (Գարուն, 77): «Հեղինե՛ ջան, Լևոնի (Շանթի) հետ ուղարկում եմ իմ նոր տպած բրոշյուրից» (ՀԹ, նամակներից):

Կոշականները գործածվում են նաև հեռագրերում, սակայն դրանց ոչ բոլոր տեսակներում: Հայտնի է, որ հեռագիր ուղարկողը ձգտում է հնարավորության սահմաններում սեղմ տեքստ կաղմել, այդ պատճառով էլ

հեռագրերը մեծ մասամբ լինում են շոր ու պաշտոնական, դրանցում բացակայում են խոսքին հույզ ու արտահայտչականություն տվող բառեր ու կապակցություններ: Սակայն շնորհավորական հեռագրերում հեռագիր տվողը ավելի առատաձեռն է և աշխատում է իր ուղարկած խոսքի մեջ հույզ ու ջերմություն դնել. այս դեպքում նա առաջին հերթին դիմում է կոչականներին, այն էլ բաղմանդամ կոչականների: Դիմենք մի երկու օրինակներ.

«Քոլորիս կողմից շատ սիրելի ու հարգելի Ռուբեն Մաթևոսյան, սրտանց շնորհավորում ենք քեզ վաղուց արժանի բարձր կոչման համար»—Մի խումբ ուսանողներ:

«Թանկագին բալիկս, ամբողջ սրտով շնորհավորում եմ ծննդյանդ օրվա առթիվ»:

«Սիրելի՛ ուսուցչուհի, իմ երկրորդ մայր, անշափ ուրախ եմ կազմարական ամենաբարձր պարգև՝ Լենինի շքանշան, ստանալու համար» Զեք սիրելի սան՝ Գագիկ Վարդանյան:

Նրբեմն էլ, հատկապես բանավոր խոսքում, հասարակաբանություններում դիմացինին վիրավորելու, կոպտելու, արհամարհելու նըպատակով ոչ թե դիմում են նրան, այլ ուղղակի նրա երեսին են շարժվում ոչ միայն ֆիզիկական արատների անվանումներ (քոռ, քաշալ, շորսաչքանի, կուզիկ, քավթառ, պառավ, կաղ, սատանա, գիժ, աննորմալ, գող, ավազակ, չբեր), այլև զանազան կենդանիների, գազանների թռչունների, սողունների, հրեշների անվանումներով վիրավորում են խոսակիցներին: Բերենք մի քանի բնագրային և բանավոր խոսքում տարածված օրինակներ. Զհամարձակվես մոտ գալ, անասո՛ւն (վՊԴԱ), Խո՛գ, ինչո՞ւ չասացիր (ԶԽ): Լկտի՛ աղջիկ, դեռ անձնագրո՞ւ է ուզում երևալ (Գարուն, 1978, 9): Աղվե՛ս, նորից խոստումնե՞ր ես տալիս (ԶԽ): Օ՛ձ, ինչո՞ւ խփեցիր, չէ՞ որ նա քնզնից փոքր է: Բռե՛նի՛, չհամարձակվես նրան ձեռք տալ: Կաշաղա՛կ, շատ ես խոսում և այլն և այլն... Այսպիսի անվանումների հետ երբեմն էլ գործածվում են այդ կենդանիների բնութագրող որոշիչներ (վայրենի գազան, խորամանկ աղվես, ստոր սողուն, սև ագռավ, կատաղած շուն, սև օձ, կոպիտ արջ, հիմար ուխտոր և այլն):

Նման վիրավորական բառերն ու անվանումները հայերենում մի հետաքրքիր կիրառություն էլ ունեն. դրանք գործածվում են մեկը անորոշ դերանվան հետ և ավելի են սաստկացնում վիրավորանքն ու արհամարհանքը (հիմարի մեկը, տգետի մեկը, ապուշի մեկը, նույնիսկ՝ եզի մեկը, խոզի մեկը, իշու մեկը և այլն):

Խնդրանք, աղերսանք, ափսոսանք արտահայտող նախադասություններում նույնպես կոչականները առատորեն են գործածվում. դրանց միջոցով ավելի է ընդգծվում ու շեշտվում ենթակայի գործողությունը, որը

այսպիսի նախադասություններում ավելի շատ առնչվում է կոշական-
ների, քան ենթակաների հետ.

վա՛յ, վա՛յ, Մոսի՛ ջան, ինձ մի՛ սպանիր,
ինձ թող էս անգամ...

...նանի՛ ջան, նանի՛, կուժը՝ թող առնեմ,

Աղբյուրը՝ գնամ աղջիկների հետ...

Ընչի՞ շես խոսում, ընչի՞ շես նայում,

իմ օր ու արև, կյանք ու ջան որդի...

...Ափսոս, Անո՛ւշ, սարի՛ ծաղիկ,

Ափսոս իգիթ քո յարին.. (ՀԹ, Անուշ):

Գեղարվեստական գրականության մեջ, հատկապես պոեզիայում
կոշականները ավելի հաճախ հանդես են գալիս ձայնարկությունների հետ,
որոնք ավելի են ընդգծում, սաստկացնում կոշականների հուղարտա-
հայտական նրբերանգները:

Ձայնարկությունները մի դեպքում՝ ուրախություն, մյուս դեպքում՝
ղարմանք, մի այլ դեպքում՝ վախ ու ցասում և կամային ու զգացական
այլևայլ վերաբերմունք են հաղորդում կոշականներին: Կոշականների
հետ առավելապես գործածվում են, այսպես կոչված, կոշական ձայ-
նարկությունները, որոնք իրենց վրա են գրավում ուրիշների ուշադրու-
թյունը և դրանով էլ ուժեղացնում են կոշականների արտաբերման հնչե-
րանգը: (Այս մասին ավելի հանգամանորեն խոսվելու է «Կոշականի
հնչերանգը» և «Կոշականի կետադրությունը» բաժիններում):

Սովորական, առօրյա-խոսակցական ոճերում շատ գործածական են
մառդ, ընկե՛ր, եղբայ՛ր, աղջի, բույ՛ր բառերը, որոնք կոշականներ դառնա-
լիս երբեմն փոխում են իրենց իմաստները և սովորական խոսքին հա-
ղորդում են հուզականություն ու պատկերավորություն: Այդպիսի կոշա-
կանների հետ հաճախ հանդես են գալիս նաև եղանակավորող բառեր ու
ձայնարկություններ:

Շատ տարածված է ա՛յ մառդ կապակցություն կոշականը, որը խոս-
քը ուղղում է ոչ թե կոնկրետ անձնավորության, այլ ընդհանուրին, եր-
բեմն էլ նույնիսկ ոչ ոքի չի ուղղվում խոսքը, ասվում է հենց այնպես.
այդ պատճառով էլ ա՛յ մառդ կոշականը մի տեսակ միջանկյալ բառի
արժեք է ստացել. «Ա՛յ մառդ, հիմա ամենքը կրթություն են ստանում,
հիմա առանց կրթության ոչինչ շես անի» (ՄԳ, 1978, 10): «Ինչեր ես
ասում, ա՛յ մառդ, ասում եմ, որ ռուսերեն իմանաս, մինչև Լոնդոն էլ
կհասնես (նույն տեղում):

Նման կիրառություն ունի նաև լիսպե՛ր կոշականը, որը իր իսկա-
կան իմաստով չի գործածվում (լիսպե՛ր, ի՞նչ գործ ունես: Ախպե՛ր,

գնա քո բանին: Դու մի մոտենա, ախպե՛ր: Ես չեմ խառնվի այդ գործին, ախպե՛ր: Նույնիսկ կանանց էլ են դիմում այդ նույն բառով: Այս նույն բառի գրական ձևը՝ եղբա՛յր, նույնպես շատ գործածական կոչական է (Սա ինչ բան է, եղբա՛յր, մարդ գլուխ չի հանում: Չեմ հասկանում, եղբա՛յր, ես ինչ կապ ունեմ այս գործի հետ):

Իբրև խոսակցական կոչական լայն գործածություն ունի նաև աղջի բառը. սրանով շատ հաճախ դիմում են ոչ միայն աղջիկներին, այլ նույնիսկ կանանց ու պառաւներին՝

Աղջի, վարդիշա՛ղ, թե հոգիդ սիրես,
Մի գարիդ գցիր, տես ի՞նչ է ասում... (ՀԹ):

Քույր կոչականը բանաստեղծական բառ է դարձել և բաղմապիսի էպիտետների ու ձայնարկվածությունների հետ գործածվում է պոեզիայում. իհարկե, այդպիսի դեպքերում այդ բառը հաճախ իր իսկական իմաստով չի գործածվում, այդ բառով բանաստեղծները դիմում են սիրած աղջրկան.

Քո՛ւյր իմ նազելի, նայիր քո դիմաց,
Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել (Ավ. Իս.):
Դու իմ վերջին, իրիկնային, աստվածային քույր (Չարենց):
Իմ քո՛ւյր, իմ դանի՛ն, իմ սո՛ւրբ սիրեկան,
Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել (Վ. Տերյան):

Նույն բառի փաղաքշական (քույրիկ) գործածությունը* նույնպես շատ է տարածված պոեզիայում.

* Մի քանի բառերի իկ փաղաքշական մասնիկով որպես կոչական գործածվելը շատ սովորական երևույթ է (հայրիկ, մայրիկ, պապիկ, տատիկ, քույրիկ, թոռնիկ), բայց նման տիպի որոշ բառերի որպես կոչական գործածվելը հնացած է կամ բարբառային (հերիկ, մերիկ, մամիկ և այլն): Հնացած ձևեր են նաև յակ-ով վերջացող կոչականները՝ հոգյակ, պատանյակ, աղալնյակ, որդյակ... Թեև հնացած, բայց դեռևս գործածվում են տեղա՛ն, մաւղ աստծո կոչականները.

- Ռ՞րտեղացի ես:
- Առյուծաշնն գավառից եմ:
- Առյուծաշն՛ն, դե, տե՛ղե՛ն, էդպես ասա (ԳԹ):

Յուրաք տարա՛վ, վա՛ն, տե՛ղե՛ն... (Հ. Թումանյան):

- Նպասիր, մա՛րդ աստծո, դեռ կհասցնես (Գարուն, 1978, 3, էջ 24):

Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ,

Քույրի՛կ, ասա՛, ո՞րն է ճամփեն Բինգյուլի (Ավ. Իս.):

էն ամպի նման ժեռոտ սարերով, Քույրի՛կ ջան, քեզնից հեռու գնացի (Ավ. Իս.):

Իբրև կոշական շատ տարածված գործածություն ունեն ընկեր, բարեկամ, երիտասարդ, ֆաղաֆացի, օրիորդ, աիկի՛ն բառերը, որոնցով դիմում են անծանոթի՛ նրանից մի բան հարցնելու, խնդրելու, որոշ տեղեկություն ստանալու, ինչպես նաև նրան դիտողություն անելու համար (Ընկե՛ր, չե՞ք զգում, որ կարգ եք խանդարում: Երիտասա՛րդ, թույլ տվե՛ք առաջ անցնել: Տիկի՛ն, նրան լա՞վ եք ճանաչում: Քաղաֆացի՛նե՛ր, նա առաջինը քաղաք մտավ):

Վերջին տարիներին, հատկապես գիտական միջավայրում, որպես մեծին, ղեկավարին դիմելու կոշական առատորեն գործածվում է շեֆ բառը.

— Պայուսակդ մոռացար, շե՛ֆ, — կանչեց վարորդը (ՀՄԾ):

— Ե՛ն՝ֆ, մեր հաջորդ հանդիպումը, կարծում եմ, շուտ չի լինելու (Զե):

Նրան ես վաղուց էի տեղյակ պահել, շե՛ֆ, այստեղ իմ մեղքը թեթևանում է (Զե):

Հեռախոսադրույցի ժամանակ ամենատարածված կոշականն է ալլո-ն, որով իրար են դիմում, հաղորդակցման մեջ են մտնում երկկողմյան զրուցակիցները՝ անկախ իրար ծանոթ կամ անծանոթ լինելու հանգամանքից: Երբեմն էլ ալլո-ի հետ տրվում է նաև ծանոթի կամ բարեկամի անունը.

— Ալլո՛, — մեղմորեն հարցրեց նա, — ո՞ւմ եք ուղում:

— Դուք եք, Արփենի մայրի՞կը:

— Ալլո՛, լսե՛ք մի բոպե, ես սիմֆոնիկի Միսիսին եմ...

...— Ինչո՞ւ ես չարչարվում, նա արժանի չէ դրան... Ալլո՛, Արփե՞ն... (Զե):

Գեղարվեստական գրականության մեջ, հատկապես պոեզիայում բանաստեղծներն իրենց խոսքի ուժը ավելի ներգործուն ու արտահայտիչ դարձնելու համար հաճախ դիմում են ոճական մի գեղեցիկ միջոցի՝ աճանավարման. սրա էությունն այն է, որ բնությունը, նրա երևույթները, թուշուններն ու կենդանիները, նույնիսկ վերացական հասկացությունները ժամանակավորապես դառնում են բանական արարածներ, շնչավորվում են ու մասնակցում բանաստեղծի հույզերին ու ապրումներին, ընկնում նրա խոսքի կենտրոնում, նրա համար դառնում ունկնդիր-կոշական: Այսպիսի դեպքերում այս շնչավորված առարկաներն ու երեվույթները կարող են լսել բանաստեղծին, պատասխանել նրան, դառնալ նրա զրուցակիցը, կարող են և միայն լուռ վկաներ ու ունկնդիրներ լինել:

Շնչավորված բնության ու բանաստեղծի երկխոսության լավագույն օրինակներից է Ռ. Պատկանյանի «Արաքսի առտասուքը» հայտնի բանաստեղծությունը, որտեղ անձնավորված Արաքսը պատասխանում է բանաստեղծի այն հարցին, թե ինչո՞ւ է ինքը տխուր, ինչո՞ւ ձկների հետ պար չի բռնում, ինչո՞ւ է բանաստեղծի նման սգավոր.

Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական...

Արաքսը պատասխանում է.

Խիզա՛խ, անմի՛տ պատանի,
Նիրհա ինչո՞ւ դարավոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցավերը բյուրավոր...

Բերենք անձնավորման օրինակներ, որտեղ առարկաներն ու երեւոյթները լուսնյամբ են մասնակցում բանաստեղծների մտորումներին.

Դու հայրենի՛ք կարմրասիրտ, գրանիտյա անառ բերդ,
Դու շողշողուն ու շոայլ, շոգի, շոգու օթեան,
Իմ Երեւան, Երեւան, Արեւային Երեւան (Ս. Տարոնցի):

Քե՛ղ, հայ լեզու, կսիրեմ մրգաստանի մը նման (Վ. Թեքեյան):
Արի, նո՛ր տարի, գալուստդ բարի (Պարույր Սևակ):
Անձրե՛կ, դու եղիր սերմ ու բալասան (Գ. Քրիստինյան):

Վերացական գոյականների օրինակներ.

Գերեզ ես դու ինձ, հարազա՛տ հեռու (Գ. Քրիստինյան):
Ողջույն քեզ, բերկրա՛նք, ողջույն քեզ, տենչա՛նք (Գ. էմին):

Կոչականի ոճական կիրառություններից է նաև Հոստորական հարցը. սա բանաստեղծական մի հնարանք է, երբ բանաստեղծը հատուկ նպատակ է հետապնդում ընդգծելու այն անձը, առարկան կամ երևույթը, որին դիմում է ինքը և իր դիմումի, հարցման դիմաց պատասխան չի պահանջում: Հոստորական հարցերով բանաստեղծները մեծ մասամբ իրենց խոսքերն ուղղում են հայրենիքին, բնությանը, ժողովրդին, ինչպես նաև անհատ մարդկանց: Հոստորական դիմում-հարցադրումներով շատ հարուստ է մեր քնարերգությունը.

Մի՞թե դու չէիր, հայրենի՛ք իմ հեգ,

Որ տալճաներից, մթին յուրդերից... (Ավ. Իս.):

Աչք ենք բացել քեզնից հեռու, քո կարոտով ծերացել,

Մի՞թե պիտի մեռնենք մի օր քեզնից անմաս, Արարա՛ւ (Ս.

Կապուտիկյան):

Վաճա՛ն Տերյան, ինչպե՛ս երգեմ հիշատակը քո,

Թող լուռ փովի հիմա իմ դեմ, անլույս երեկո (Ն. Չարենց):

Իմ հա՛յ ժողովուրդ, իմ բազմաշնորհ... (Ս. Կապուտիկյան):

Հոնտորակա՛ն հարցում-դիմումի նման պոեզիայում լայն տարածում ունի նաև հոնտորակա՛ն բացականշուքյունը, որը նույնպես բանաստեղծական հնարանք է և զգացմունքային ընդգծված երանգ է հաղորդում խոսքին: Այս դեպքում նորից բանաստեղծի խոսակիցը հայրենիքն է, բնությունը, լեզուն ու ժողովուրդը կամ որևէ անձ ու իր, որը հանդես է գալիս որպես կոչական և իր պաթետիկ հնչերանգով ընթերցողի ուշադրության կենտրոնն է դառնում.

Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,

Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,

Իմ նո՛ր հայրենիք,

Հգո՛ւր հայրենիք... (ՀԹ):

Հեյ ագա՛ն մարդ, հեյ անգո՛ն մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ,

Քանի քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ,

Խո՛նչ են տարել նրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ (ՀԹ):

Դու իմ գարնա՛ն առավոտ—Խո՛նչպես կանչեմ քեզ հիմա...

Եվ դու ոսկի՛ իմ ամառ, հրանման, հրավառ,

Ամռան կեսո՛ւր դու իմ տո՛թ—Խո՛նչպես կանչեմ քեզ հիմա:

Եվ դու ոսկի՛ իմ աշուն... Խո՛նչպես կանչեմ քեզ հիմա (Ն. Չա-

րենց):

Ոճական մի գեղեցիկ հնարանք է նաև կոչականների կրկնությունը, որի միջոցով բանաստեղծը, խոսողը ավելի է ուժեղացնում իր խոսքի հուզական բովանդակությունը: Կրկնվող կոչականները ուժեղացնում են բանաստեղծության ռիթմը և ավելի աշխուժացնում խոսքը.

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, Բաֆո,

Որքան հեքիաթներ կան այս գորշ քաղաքում (Ն. Չարենց):

Բրոնզե ֆո'յր իմ, բրոնզե ֆո'յր իմ, բրոնզե հա'րս,
Լուսավոր դու, հրասիրտ ու հրավարս... (Ծ. Չարենց):
Ի՞նչ ես գաղաղում, իմ վիրավո'ր սիրտ,
Տոկա, համբերիր, իմ վիրավո'ր սիրտ (Ավ. Իս.):

Այսպիսի կրկնվող կոշականները իրենց հետ կարող են ունենալ նաև տարբեր լրացումներ.

Հեյ ճամփանե'ր, ճամփանե'ր,
Անդա'րձ ու ճի'ն ճամփաներ,
Ու վեր անցան ձեզանով,
Ո'ւր գնացին, ճամփանե'ր (ՀԹ):
Օ, սևագո'յն ֆաբեր, օ, սևավո'ր ֆաբեր,
Սուգեռով լի', ֆաբեր սևաֆանդակ (Ս. Կապուտիկյան):

Կրկնություն մի տեսակին է նաև վերջույթը (էպիֆոր), երբ կոշականները շարադասվում են միայն տողերի վերջում.

էնքան ըլի մե-մե անգամ տեսեմ՝ վարդ ես, գոգա'լ,
էս փուշ կյանքում սրտիս տված անմահական զարդ ես, գոգա'լ,
էնպես արա, որ քեզ շասեմ՝ դու էլ ինձ պես մարդ ես, գոգա'լ
(Չարենց)

Մահը, գիտես, մի լուսավոր առասպել է, ֆո'յր,

Կյանքը այնքան մեղկ ու անդույն ու անբեր է, ֆո'յր (Չարենց):

Բանաստեղծական խոսքում շատ է պատահում, որ կրկնվում են ոչ միայն նույն կոշականները, այլ խոսողը առանձին-առանձին դիմում է մի քանի անձնավորությունների, առարկաների կամ երևույթների, ըստ որում՝

ա) այդ տարբեր կոշականները կարող են ունենալ նույն կարգի լրացումներ (նույն խոսքի մասով արտահայտված, նույնաբնույթ որոշիչներ, հատկացուցիչներ կամ բացահայտիչներ).

Մայրենի' լեզու, մայրենի' բարբառ,

Ախորժ ընտանի իմ հոգու համար (Ստ. Նազարյանց):

Հայո'ց աշխարհ, հայո'ց երկիր, հայո'ց հող,

Լայն աշխարհում, քո գրկի մեջ ապրեմ թող (Ս. Կապուտիկյան):

բ) տարբեր կոշականները հաճախ տարբեր էլ լրացումներ են ունենում, որոնք բնութագրում են կոշականների տարբեր հատկանիշները. ահա մի քանի օրինակներ.

Մ'նաք բարով, արե՛, գարո՛ւն,
 Եվ խնկաբռ՛ւյր ծաղիկներ,
 Կարկաշանո՛ւս վտակ սիրուն,
 Կանաչագգեստ բլուրներ (Հ. Հովհաննիսյան):
 Դարդս լացե՛ք, սարի՛ սմբով, Ալվա՛ն-ալվա՛ն ծաղիկներ,
 Դարդս լացե՛ք, բաղի՛ բլբուլ, Ամպշող Ծղկնուց զո՛վ հովեր
 (Ավ. Իս.)

Քեզ համար եմ ծաղիկներ հավաքում,
 Քո ճամփին եմ ես ծաղիկներ փռում.
 Օ՛ր, մա՛յր Ռուսաստան, Օ՛ր, անդո՛ւր իմ անկյուն (Ս. Եսենին):

Գեղարվեստական գրականության մեջ, հատկապես պոեզիայում, շատ է պատահում նաև, երբ կրկնվող, իրարից տարբեր կոչականներից կամ դրանց լրացումներից հաջորդը ուժեղացնում, սաստկացնում է նախորդի իմաստը, և այսպես, աստիճանաբար խոսքի ուժգնությունն ու հուզարտահայտչականությունը գնալով բարձրանում է այդ կրկնվող կոչականների միջոցով. այս երևույթը գրականության տեսության մեջ անվանվում է աստիճանավորում (գրադացիա, կլիմաքս)⁶:

Ահա աստիճանավորման օրինակներ՝ արտահայտված կոչականներով.

Գեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,
 Այդ ինչպես քաղցր հնչում ես դու (Ստ. Նաղարյանց):
 Իմ հա՛յ ժողովուրդ, իմ մեծամա՛յր,
 Սիրում եմ քեզ, ի՛մ կենսատու (Ս. Կապուտիկյան):
 Երկիր Հայաստան, իմ գագաթ, իմ լույս,
 Հողմերին տրված դարավոր ի՛մ ձյուն... (Վ. Դավթյան):

ԿՈՉԱԿԱՆԻ ՀԵՉԵՐԱՆԳ

Հայտնի է, որ հնչերանգի միջոցով է ձևավորվում և իրական տեսք ստանում նախադասությունը: Հնչերանգը արտահայտում է նաև խոսողի վերաբերմունքը իր հաղորդածի նկատմամբ: Եվ վերջապես հնչերանգն է այն հիմնական միջոցը, որով խոսողն անմիջականորեն արտահայտում է իր զանազան զգացմունքները¹: Այս տեսակետից կոչականները, որպես նախադասության կազմի մեջ մտնող միավորներ, որոնք միաժամանակ նաև

⁶ Տե՛ս էգ. Զրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1972, էջ 268:

¹ Տե՛ս Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 5:

խոսողի վերաբերմունքն են արտահայտում խոսակցի նկատմամբ, օժտված են առանձնահատուկ հնչերանգով: Բառը կոչական է դառնում միմիայն հնչերանգի միջոցով: Ցանկացած բառ ու բառակապակցություն դառնում է կոչական, եթե արտաբերվում է ձայնի մի առանձին բարձրացումով կամ ուժգնությամբ և ապա իջեցումով, ինչպես նախադասության հնչերանգն է: Միևնույն բառը տարբեր հնչերանգներով արտաբերելու պայմաններում տարբեր արժեքներ է ձեռք բերում: Համեմատենք այս նախադասությունները՝

1) Պարտեզում աճել է մի գեղեցիկ ծառ: 2) Մա՛ն, կարծեմ հիշում ես այն երեք մանուկներին (Գ. էմին):

1) Հեղձում մենք տեսանք մի մեծ անտառ: 2) Ինչ ասեմ, անտա՛ռ, քո ականջին, որ դու նրա առաջ չկռնաս (Հ. Սահյան):

1) —Վարդա՛ն, տափսի կանչիր: 2) —Տափսի...

Բերված առաջին նախադասություններում ծառ, անտառ և տափսի բառերը արտաբերվել են շատ սովորական հնչերանգով և նախադասության տարբեր անդամներ են, բայց երկրորդ նախադասություններում դրանք բոլորովին այլ հնչերանգով են արտաբերվել և դարձել են կոչականներ: Վերջին բառը՝ տափսի—ն նույնիսկ դարձել է առանձին՝ կոչական անվանական նախադասություն:

Ըստ իրենց ռեալմաստային արտահայտչական բազմազանության էլ կոչականներն ունեն հնչերանգային հարուստ նրբերանգներ: Մի դեպքում կոչականներն արտաբերվում են ուժեղ, բարձրացող հնչերանգով, մյուս դեպքում՝ մեղմ կամ թույլ, մի այլ դեպքում՝ ձգվող կամ կտրուկ և այլն: Կոչականների հնչերանգային այս հարուստ բազմազանությունը պայմանավորված է նրանց արտահայտչական բազմաբնույթ առանձնահատկություններով՝ բնույթով, կատարած պաշտոնով, կազմությամբ, նախադասության մեջ դրաված տեղով, ինչպես նաև խոսակիցների մեջ գոյություն ունեցող փոխհարաբերություններով, նրանց աստիճանով, դիրքով, կրթությամբ, զբաղմունքով, միջավայրով, տարածությամբ և այլն²:

Ճիշտ է, հնչերանգի միջոցով է ձևավորվում նախադասությունը, հնչերանգն է մի ամբողջության մեջ առնում նախադասություն կազմող միավորները, բայց կոչականի հնչերանգը առանձնանում, ընդգծվում է նախադասության ամբողջական հնչերանգից. որոշ դեպքերում են միայն

² Грамматика русского языка, под. ред. В. В. Виноградова том 2, Синтаксис, часть 2, М., 1954 г. стр 138 և վ. Ասաբեյան, Հայերենի շարահյուսություն, 4. 2, Երևան, 1964, էջ 431:

դրանք միաձուլվում, այդ էլ այն դեպքում, երբ կոշականը հանդես է գալիս մի տեսակ թարմատար (միջանկյալ) բառի կիրառությամբ:

Ձայնի ամենաբարձր ուժգնությամբ են արտաբերվում նախադասության սկզբում դրվող կոշականները, մասնավանդ եթե դրանք միանգամ են: Այս դեպքում կոշականն ունենում է հուժկու, զորեղ շեշտ, և ձայնի բարձրացող տոնայնությանը հաջորդում է զգալի դադար:

— Աղա՛մ, ահա քեզ ընկեր, գեղեցիկ կիլիթը (Ավ. Իս. կիլիթ):

— Նաճի՛, վախեցի,— գանգատվում է նա:

Եվ ուզում է լալ, չի կարողանում (ՀԹ):

— Լա՛ն-Մարգար, ջուրը բարակեց (Բակունց):

Կոշականը արտաբերվում է ավելի ուժգին հնչերանգով, երբ այն հանդես է գալիս հրամայական նախադասություններում, ինչպես նաև հոնտորական բացականչություններում:

— Մանա՛ս, իմացիր առաջդ ով ա կանգնած: Ես դավոյեմք Առաքելն եմ, բա դու ո՞ւմ լակոտն ես (Բակունց):

— Լիլի՛թ, հրեշտակներից չճնաղ,— թոթովեց Աղամ,— այդ ի՞նչ ծաղիկներ էին, որ դու քաղեցիր (Ավ. Իս.):

Բացականչական նախադասություններում խոսողը որոշակի նպատակ ունի, այն է՝ լսողի մեջ առաջացնել համապատասխան զգացմունքներ և իր խոսքին մասնակից դառնալու ցանկություն. այդ բանը հիմնականում իրականացվում է հնչերանգի միջոցով:

Է՛յ, հի՛ն ծանոթներ, է՛յ կանա՛շ սարե՛ր,

Ահա ձեզ տեսա, ու միտս ընկան,

Առաջս եկան երջանիկ օրեր,

Սիրելի զեմքեր, որ հիմի չկան (ՀԹ):

Ա՛յ ժողովուրդ, բա չեք տեսնում ինչ է կատարվում (Վ. Փափազյան):

Է՛հ մնաք բարով, Աստվա՛ծ և արե՛հ,

Որ կալպլաք իմ հոգվույս վերե... (Պ. Դուրյան):

— Ա՛խ, Լիլի՛թ, իրավ դու անգութ ես (Ավ. Իս.):

Ամենաբարձր հնչերանգով, թերևս, օժտված են այն կոշականները, որոնք արտահայտված են մեկ բառով և նախադասություններ են, այսինքն միակազմ անվանական-կոշական նախադասություններ, Այս դեպքում, ինչպես ասվել է, այդպիսի նախադասությունները պետք է վերցնել խոսքաշարի հետ (տե՛ս էջ 248 և 268):

Դասի ժամանակ աշակերտներից մեկը ուշադիր չէ, ուսուցիչը դիմում է նրան՝ միայն անունը կամ ազգանունը տալով.

— Տիգրա՛ն... կամ՝ վարդանյա՛ն... (Հասկանալի է, որ ուսուցիչը դիտողություն է անում—Տիգրա՛ն, կամ վարդանյա՛ն, ուշադիր եղիր, դասը լսիր...)։ Կամ երբ ուսուցիչը նայում է դասամատյանին և ցանկանում է դաս հարցնել, բավական է, որ արտաբերի աշակերտներից մեկի անունը կամ ազդանունը, դա կլինի առանձին նախադասություն իր ավարտուն հնչերանգով ու ներքին ստորոգումով (այսինքն՝ Հասմի՛կ... կամ Տոնոյա՛ն, մոտեցիր գրատախտակին, կամ՝ դասդ պատմիր... և այլն)։

Այս կարգի նախադասությունները սովորաբար հանդես են գալիս խոսքային միջավայրում, մեծ մասամբ երկխոսություններում։ Ահա ևս մեկ օրինակ.

Նետո բիձու պատմությունը որ վերջացավ, վեր կացան, վերմակաները հտ քաշեցին։ Գուրդշին Օդեն բռնեց։ Բայց Կիրակոսը...

— Կի՛րակոս։

Ժաժ չի գալի։

— Կի՛րակոս...

Պատասխան չի տալի։

— Կիրակո՛ս,— ձեն տվին, շարժեցին, քաշքշեցին։ Կիրակոսը չկա (Թումանյան)։

Առաջին Կիրակոս կոչականը արտաբերվել է մյուսների նկատմամբ համեմատաբար թույլ հնչերանգով, այդ պատճառով էլ Թումանյանը շեշտել է առաջին ձայնավորը, սակայն երկրորդի դեպքում կա վախի զգացումը, հետևաբար հնչերանգը ավելի ուժգին է, իսկ երրորդում առկա է սարսափը, այդ պատճառով էլ մեծ արվեստագետը շեշտել է վերջին ձայնավորը։

Այս դեպքում հնչերանգը բարձրանում է ամենաբարձր աստիճանի և իջնում է աստիճանաբար, կարծես թե մնում է անավարտ. այդ է պատճառը, որ գրավոր խոսքում այդպիսի նախադասություններից հետո սովորաբար բազմակետ է դրվում։

Հնչերանգի համար շատ կարևոր է այն հանգամանքը, թե խոսողը ինչ տրամադրությամբ է արտաբերում նախադասությունը, թե նա ինչ վերաբերմունք ունի խոսակցի նկատմամբ։ «...Հնչերանգի միջոցով կարելի է արտահայտել զգացմունքների մի ամբողջ գամմա, ինչպես՝ զարմանք, գրգիռ, զայրույթ, արհամարհանք, հարգանք, վստահություն, անվստահություն, ուրախություն, հրճվանք, ցնծություն և այլն»³։ Եվ իսկապես, հնչերանգը շատ մեծ դեր ունի մեկի նկատմամբ վերաբերմունք արտահայտելու՝ համար։ Այսպես, եթե խոսողը խոսակցին դիմում է կշտամբանքով, զայրույթով, նրան վիրավորելու, անարգելու, կոպտելու նպատակով, այդ դեպքում նա գործածում է հատկապես վիրավորական

³ «Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում», Երևան, 1978, էջ 135։

բառեր ու բառակապակցություններ և իր խոսքի ամբողջ ուժգնությունը խտացնում է այդ բառի մեջ, որը և արտաբերվում է հզոր շեշտով, պայթող հնչերանգով: Այս է պատճառը, որ գրողը նման դեպքերում ուրիշի ուղղակի խոսքից հետո, որտեղ հենց այդ կոշականն է, հեղինակային խոսքում գործածում է պոռթկաց, պայթեց, գռաց և նման բառեր.

— Ո՛ւր էիր կորել այսբան ժամանակ, ապո՛ւշ,— պայթեց նրա գլխին կինը (ԳԹ):

— Հայվա՛ն, քեզ սալդաթ են ուղարկել... (Բակունց):

— Զհամարձակվես,— ճշում եմ ես,— չհամարձակվես, անասո՛ւն (ՎՊ ԴԱ):

Այսպիսի դեպքերում նույնիսկ կոշականի շարադասությունն էլ նշանակություն չունի հնչերանգի համար: Այդպիսի բարձր հնչերանգով են արտաբերվում նաև բառակապակցությամբ արտահայտված դայրացական, բացականչական կոշականները.

— Ստո՛ւր անասուն,— տեղից գռուաց վահանը,— տեղը դիր նամակը (Գարուն, 1978, 9):

Կորիր այստեղից, շա՛ն տղա... Ձայնդ կտրիր, հի՛մարի մեկը...

Իսկ եթե խոսողը խոսակցին դիմում է սիրալիր, քնքշությամբ, այդ դեպքում նրա տոնը կլինի շատ մեղմ, կոշականի հնչերանգը՝ թույլ, այդպիսի դեպքերում նույնիսկ բառերն էլ քիչ նշանակություն ունեն. նույնիսկ կոպիտ բառերն էլ արտաբերվում են մեղմ հնչերանգով. այս դեպքում կոշականը ստանում է փաղաքշական հոգը (Հիմարի՛կս, շատ ես պարել: Շունի՛կս, մի՛ խաբիր):

Առանձնապես ուժեղ են շեշտվում և բարձրացող հնչերանգով են օժտված այն կոշականները, որոնք խոսողի կողմից օգտագործվում են խոսքին հատուկ շունչ հաղորդելու համար, երբ հեղինակը դրանց դիմում է հատուկ նպատակով: Այս դեպքում նույնիսկ նշանակություն չունի, թե այդ կոշականները ինչ դիրք ունեն նախադասության մեջ: Նման դեպքերում կոշականի հնչերանգը միանգամայն տարբերվում է մյուս բառերի հնչերանգից. այն բարձրացող է և աստիճանաբար իջնող: Եթե ընդգծվող կոշականը նախադաս է, նրանից հետո դադար է տրվում, ձայնը իջնում է, ապա նոր արտաբերվում են նախադասության մյուս միավորները.

Ո՛վ Արտաբազ, նայիր դու ինձ (Վ. Դավթյան):

Կլեռպատրա՛, գեղեցկությունդ մարմնավոր

Բազմապատկիր քո հոգևոր գեղեցկությամբ

Եվ տուր ինձ ծովան իմ ծխանի (Վ. Դավթյան):

Իսկ եթե շեշտվող, ընդգծվող կոշականը վերջադաս է, այս դեպքում նրանից առաջ ձայնի մեծ դադար է տրվում, որպեսզի ավելի բարձր շնչով արտաբերվի կոշականը.

Ես սիրում եմ աշունդ, Երևա՛ն...

Իմ լուսաբացին մրրիկը պայթեց,—

Ես քո զինվորն եմ, Երկի՛ր հայրենի (Գրիգոր Հակոբյան):

— Փորձանք ա գալու, Պե՛տի... (Բակունց):

— Բաղը մարդ կգա, Դիլա՛ն... (Բակունց):

Միջադատի դեպքում կոշականի և՛ սկզբից, և՛ վերջից դադար է տրվում, իսկ կոշականը ավելի բարձր հնչերանգով է արտաբերվում:

Կանձրեհ, աղա՛ս... աշունը թաց է (Վ. Թեքեյան):

— Ես քեզ եմ սիրում, հայրի՛կ, միայն քեզ (Հր. Քոչար):

Մառդ պտուղ չի տար, յավրի՛ս, գողության մի վարժեցրու (Բակունց):

Երբ կոշականի հետ հանդես է գալիս ջան բառը, դա ավելի է ամբողջականացնում (տե՛ս էջ 261) կոշականի հնչերանգը:

Մեր երկիրն ենք գնում, աղա՛ ջան, մեր երկիրը (Գարուն, 1978, 9):

Բան չկա, բալա՛ ջան, թող այդպես լինի (ՎՊԴԱ):

Նախադաս կոշականները բարձր հնչերանգով են արտաբերվում նաև այն դեպքում, երբ նրանց նախորդում են ձայնարկություններ: Այս դեպքում ձայնարկությունը կոշականի հնչերանգին ավելացնում է համապատասխան երանգ⁴:

Է՛ն, աղա՛ ջան, դարդ մի արա՛,

Մովափին եմ ես ծնվել (Ալ. Մատուրյան):

— Վա՛յ, Դավի՛թ, ասա՛վ, մահս տանի քեզ,

Դո՛ւ պետք է է՛ն հոր զավակը լինես (ՀԹ):

Համադասական նախադասություններում հանդես եկող տարբեր կոշականներ, որոնք դրվում են նախադասության սկզբում, նույնպես արտաբերվում են բարձր հնչերանգով:

— Աղա՛մ, քո բոլոր օրերիդ մեջ՝ հետևիր կիլիթին, և դու, կիլի՛թ, հնազանդ եղիր Աղամին (Ավ. Իս.):

— Արփե՛ն, լսի՛ր, դու սեղան կպատրաստես, Մարա՛տ, դու էլ շուկա կգնաս, իսկ դու, Մարգի՛ս, հյուրերով կզբաղվես (ԶԽ):

Առավել հետաքրքրական հնչերանգ ունեն այն կոշականները, որոնց հետ հանդես են գալիս հարցական բառեր կամ հարցումը կատարվում է առանց հարցման բառերի: Հարցում արտահայտող նախադասություննե-

⁴ «Ակնարկներ միջին դրական հայերենի պատմության», Երևան, 1975, հ. 2, էջ 189:

րում «Հարցման շեշտակիր վանկում (միջուկում) հիմնական տոնը կրտուկ աճում է, իսկ ետշեշտում՝ կտրուկ նվազում: Սա հարցման հնչերանգի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն է»⁵: Սա նշանակում է, որ հարցական նախադասություններում հնչերանգային ժանրաբեռնվածությունը կենտրոնանում է հարցում արտահայտող բառի վրա, հետևաբար նախադասության կազմում եղած կոչականին արտաբերման ավելի թույլ հնչերանգ է մնում:

— Ո՞ւր ես, հայրի՛կ, որոնիր ինձ (Հր. Քոչար):

— Ո՞ւր էիր երեկ ամբողջ օրը, Լիլի՛ք (Ավ. Իս.):

— Ե՞րբ կվերադառնաս, Աղա՛մ (Ավ. Իս.):

Ո՞րտեղ եք, շրջանավարտեն՛ր (Ավանգ.): Տո՞ւն ես գնում, Մամբրե՛ (ՎՊԴԱ):

Նույն բանը կարելի է ասել նաև հոետորական հարցման վերաբերյալ. միայն, եթե նախորդ հարցական նախադասություններում կոչականի հնչերանգը պատասխանի միտում ունի, ապա այս դեպքում դա էլ է վերանում:

Ո՞վ կարող է հլու և հեզ չաղոթել Ձեզ, օ, տիկի՛ն (Տերյան):

Մահն է արդյոք, թե նինչը քեզ պատել, պայծա՛ռ նաիրի (Տերյան):

Այս դեպքերի համեմատությամբ կրկնվող կոչականները ավելի զորեղ շեշտ են ստանում և արտաբերվում են ավելի բարձր հնչերանգով: Կրկնվողներից ավելի ուժեղ շեշտվում է այն կոչականը, որը միևնույն առարկայի կամ երևույթի տարբեր անվանումն է:

Փշատենի՛, փոքրի՛կ ծառ, Հայաստանի ճամփաներին

Օրորվում ես անդադար (Ս. Կապուտիկյան):

— Հայրի՛կ, սիրելի՛ ծնող, վերադարձրու ինձ այդ թղթերը (ՇՊՀ):

Բագրա՛տ, Բագրա՛տ, ինը տարի է այդ մարդը գերեզմանից անիծում է մեզ (ն.տ.):

Նկատելի է, որ երկրորդ կոչականը, եթե լրացում է ունենում, հնչերանգի արտաբերման ուժգնությունը կոչականից անցնում է լրացման վրա:

Փառքի երկի՛ր փառաճեղ, վերածնվա՛ծ հայրենի՛ք,

Նոր փառքերդ ավետող հնչուն փողը համբուրեմ (Դեմ):

Ափսոս, Շողի՛կ, սիրո՛ւն Շողիկ,

Մեր աչքի լո՛ւյս, մեր ալ ծաղիկ... (ՀԹ):

⁵ «Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում», Երևան 1978, էջ 126:

Բազմանդամ կոշականի դեպքում հնչերանգը թուլանում է, և ինչքան ծավալուն է կոշականը, այնքան թույլ է նրա հնչերանգը.

Բախտի համար քո աշխարհի

Դու վառվեցիր լույսի նման,

Հայոց երգի, հայոց վերքի

Բոցով լցված, մե՛ր Արուսյան (Ս. Կապուտիկյան):

Կապույտ երկնքի ոսկեղեն աստղեր,

Ձեր հեռվից դուք միշտ տեսնում եք նրան (Տերյան):

Բերված օրինակներում բազմանդամ կոշականների գերադաս անդամը նույնիսկ չի առանձնանում իր հնչերանգով. միայն այդ բազմանդամ կոշականները նախադասության մյուս միավորներից են որոշ դարձված անջատվում:

Իրար հաջորդող երկու կոշականներից ուժեղ շեշտ ստանում է երկրորդ կոշականը, իսկ եթե միասին հանդես են գալիս մի քանի կոշականներ, այդ դեպքում ամենաբարձր տոնով շեշտվում է ամենավերջինը: Եվ ընդհանրապես, ընդարձակ կոշականները ավելի ցածր հնչերանգ ունեն, քան համառոտները, և ինչքան բազմանդամ է կոշականը, այնքան թույլ է հնչերանգը.

Լեռներ... բա՛րձր ու կաճա՛շ լեռներ... սուր ցողերի ու շաղերի, աճմանակաճ սառն աղբյուրների, սև-սև ամպերի, երեղեն կայծակների, քրեղեն տարափների՝ լեռներ... (Հ. Թումանյան, Լեռների հովիվը):

Այդպիսի բազմանդամ կոշականներ են լինում նաև կոշերում, որոնցում կոշականը շատ երկար լինելու պատճառով թույլ հնչերանգ է ունենում.

Փիզկուլտուրայի և սպորտի՝ աշխատողներ, մարզիկներ և մարզուհիներ, ֆիզկուլտուրան ավելի ակտիվորեն արձատավորեցեք սովետական մարդկանց ամենօրյա կյանքում (ՍՀ):

Եթե կոշականներն ունենում են լրացումներ, հնչերանգային ուժգնությունը ընկնում է նախադաս լրացման վրա, իսկ եթե լրացումը ետադաս է, լրացումը չի շեշտվում, այլ շեշտը մնում է կոշականի գերադաս անդամի վրա.

Ախ, ինչքան, ինչքան կարոտել եմ ձեզ,

Սիգապա՛նձ լեռներ հայոց աշխարհի,

Վաղել եմ, հոգնել ձեր լանջերում ես,

Իմ լեռներ, լեռներ, լեռներ հայրենի (Վ. Արամունի):

Շատ հաճախ հեղինակը հատուկ նպատակով է դիմում այս կամ այն առարկային՝ շնչավորելով այն, այդ դեպքում դրանցից յուրաքանչյուրը առանձին շեշտ է ստանում և արտաբերվում է բարձր ու հատուկ հնչերանգով.

Հայոց երա՛գ, հայոց հո՛ւյս, հայոց պաշտպա՛ն, հայոց սյո՛ւն,
Արարատիդ բազմադար կապույտ կողը համբուրեմ (Դեմ):

Իմ տո՛ւն, իմ ուրդի՛, իմ երգերի գի՛րք,

Դու իմ մա՛յր լեզու, Արարատյան դաշտ (Ս. Կապուտիկյան):

Հաճախ խոսքի մեջ հանդես են գալիս այնպիսի կոշականներ, որոնք բավականին թույլ են շեշտվում և արտաբերվում են ցածր հնչերանգով. այդ պատճառով էլ այդպիսի կոշականի և նրան նախորդող կամ հաջորդող բառերի միջև երկար դադար չի լինում, դրանցում անցումը համեմատաբար թեթև է: Սա լինում է այն դեպքում, երբ կոշականը չունի հատկապես նպատակադրված անհրաժեշտություն, երբ այն գործածվել է խոսքին միայն երանգ տալու համար: Այդպիսի կոշականները արտահայտվում են ոչ թե անձնանուններով, այլ ընդհանրական, որևէ կոնկրետություն չարտահայտող բառերով (եղբայր, ազիզ, այ մարդ, ժողովուրդ, այ ժողովուրդ, տնաշեն, բալա, աղջի, քեռի, լակոտ, պապի, տատի, հորեղբայր, լաո, բալամ և այլն (վերջին երկուսը՝ բարբառային): Այսպիսի կոշականները կարող են և՛ նախադաս, և՛ միջադաս, և՛ վերջադաս դիրք ունենալ. այս դեպքում հնչերանգը շարադասության հետ չի կապվում, այդպիսի կոշականները մի տեսակ միջանկյալ բառերի արժեք են ստանում: Ահա մի քանի օրինակներ. Ձին պահի, բալա՛ս (Բակունց): Նաե՛ի՛, ես պսակված չեմ (ն.տ.):

— Ա՛յ պառավ, բա օբմին չի երևում, ներքեից ասաց Ավան ամին (ն.տ.):

— Սուրճ պատրաստիր, տիկի՛ն, խմելու բան բեր (Գարուն, 1978, 9):

— Լսում եք, ա՛յ ժողովուրդ, ի՞նչ է ասում (ՍԳ, 1978, 10): Հայ իս, հայերեն խոսա, լա՛ն (Վ. Սարոյան): Սուտ են ասում, ա՛յ մարդ, դրանց մի հավատա (Գարուն):

Նման միջանկյալ բառի դեր է կատարում նաև աստված կոշականը.

— Փառք քեզ, աստվա՛ծ, դու ստեղծեցիր ամենագեղեցիկը և կատարյալը քո արարածների մեջ (Ավ. Իս., Լիլիթ):

Փառքդ շատ, որ ես դեռ կամ, աստվա՛ծ,

Ամեն ինչի հետ այսպես հաշտված (Հ. Սահյան):

Կոշականը թույլ հնչերանգով է արտաբերվում և ձայնային թույլ շեշտ է ստանում, երբ խոսակիցները իրար դիմում են նաև անուններով

կամ տխուրսով, և խոսակցությունը գնում է ոչ լարված, բարեկամական մթնոլորտում: Այդ նպատակներով է գործածվում նաև շեֆ կոչականը: Այսպիսի պայմաններում, ավելի մտերմիկ միջավայրում (երբեմն էլ հեգնանքով իրար դիմում են սիրելիս կոչականով):

Այս և ոչ պատասխանական բառերից հետո, որոնք իրենց վրա են վերցնում նախադասության ուժգնությամբ արտաբերվող հնչերանգային շեշտը, կոչականները նույնպես թույլ են արտաբերվում.

— Մի՞թե չգտար քեզ նման:

— Ոչ, իվի՛թ, դրա համար էլ աստված քեզ ստեղծեց ինձ համար (Ավ. Իս.):

...Առաջին անգամ՝ եք գնում Սիրիո:

— Այո՛, քեզի՛ Անդրանիկ, առաջին անգամ եմ գնում (Պ. Ղուկասյան):

Երբ նախադասության մեջ կան բարեմաղթանքի բառեր, նորից, նույն պատճառով, կոչականները թույլ են շեշտվում.

— Բարի գիշեր, Ռուբեն՛:

— Լույս բարի, Ցուլա՛կ (Գարուն, 1978, 10):

— Իվի՛թ, բարի լույս (Ավ. Իս.):

— Մնաս բարով, Լեո՛ն:

— Դնաս բարով, Վասա՛կ, գնա և հասիր նրան... (ՆԶ):

Եվ վերջապես, կոչականի հնչերանգի համար շատ կարևոր նշանակություն ունի խոսքի բնույթը (թե խոսակցությունը ինչ պայմաններում է տեղի ունենում. սիրալիր, բարեկամական, թե՞ ցասման, դայրուլթի ու բարկության), ինչպես նաև կոչական պարունակող նախադասության կոնտեքստը: Կոչականի հնչերանգի համար շատ կարևոր է նաև, թե ինչ հանգամանքներից հետո կամ առաջ, առերես կամ մտովի է դիմում խոսողը իր խոսակցին:

Օրինակ, եթե «Գարուն» ամսագրի 1978 թ. № 9-ում ղեկեղված Վ. Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը» վիպակից անշատվի միայն «Ո՛չ, ճիշտ չի լինի, ուսուցիչ՛ը» նախադասությունը, ուսուցիչ կոչականը բոլորովին այլ հնչերանգ կունենա. կմտածվի, թե աշակերտը դայրացած է ուսուցչի դեմ և ուժգին հնչերանգով է արտաբերում այն: Մինչդեռ կոնտեքստում այդպես չէ: Նախորդ նախադասությունները կարդալիս կզգացվի, որ ընդհակառակը, ուսուցիչ կոչականը շատ մեղմ ու թույլ հնչերանգով է արտաբերվում, որովհետև վիպակի հերոսներից մեկը՝ 10-րդ դասարանի աշակերտ Արմենը ոչ թե դայրացած է ուսուցչի դեմ, այլ վերհիշում է նրա խորհուրդը և երկմտում. ճի՛շտ կլինի արդյոք, եթե այդպես վարվի. «Ինքդ պիտի որոշես,— երեկ ասաց Մամյանը,— միայն ինքդ, ինչպես

որ որոշես, ճիշտ կլինի»: Ո՛ր, ճիշտ չի լինի, ուսուցի՛չ, հետո մտածեց.
գուցե ուսուցիչը քեզ ավել՞ի է հասկանում, քան ինքդ քեզ»:

(Գարուն, 1978, № 9, էջ 41):

ԿՈՉԱԿԱՆԻ ՇԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Նախադասության մեջ կոչականի գրաված տեղը և նրա հնչերանգը հիմնականում փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով:

Ժամանակակից գրական հայերենում կոչականները գրեթե ազատ, շարահասություն ունեն. դրանք կարող են դրվել նախադասության սկզբում, մեջտեղում և նույնիսկ վերջում: Սակայն կոչականի տեղը նախադասության մեջ մեծ չափով ազդում է նրա կշռի և հուզական ներգործության վրա: Այսպես, նույն կոչականի՝ նախադասության սկզբում, վերջում կամ մեջտեղում լինելու դեպքում նրա հնչերանգային ու ներգործուն ազդեցությունը նույնը չի լինի.

— Գի՛ճ՛՛ր ջան, բա եկել եմ: Գիճո՛ր ջան... ևս քո ապին եմ է...

— էստեղ եմ, Գի՛ճ՛՛ր ջան, նանը դարգել ա, որ քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՞ս... (Հ. Թումանյան, Գիճորը):

— Ուրդի՛, շատ մի մտածիր, համբերիր: Ասա, ինչ է պատահել, ուրդի՛ (ՇՔ):

Ավելի մեծ կշիռ, բարձր հնչերանգ, ու ներգործուն ուժ ունեն նախադասության սկզբում դրված Գի՛ճ՛՛ր ու ուրդի՛ կոչականները:

Նախադասության սկզբում դրվող կոչականները ուժեղ շեշտված լինելու պատճառով համեմատաբար ավելի են անջատելի, նրանց և մյուս բառերի միջև եղած դադարը ավելի մեծ է:

Կոչականի տեղը նախադասության մեջ ազատ է, բայց այնուհանդերձ, նայած խոսքի ոճին, նախադասության բնույթին, խոսողի վերաբերմունքին, կոչականը հաճախ ունենում է իր նախընտրելի տեղը: Այսպես, օրինակ, ճառերում, լողունգներում, կոչերում, որոշ օրծառական ոճերում կոչականը, որպես կանոն, դրվում է նախադասության սկզբում, և ինչպես ասվել է, դա այդպիսի ոճերի համար սովորական բանաձև է դառնել: Քանի որ նման օրինակներ բերվել են նախորդ բաժիններում, այստեղ կբերենք մեկական օրինակ. «Քանկագի՛ն ընկերներ, բարեկամներ, այսօր Երևանում սրտերի իսկական դաշինք է (ՍՀ, 15.10.1978), Երեխաներ՛, մի խաղացե՛ք փողոցի երթևեկելի մասում: Վա՛րճ՛՛րդ, մի գեղազանցի՛ր սահմանված արագությունը:

Կոչականները պարտադիր կարգով նախադաս են հատկապես պաշտոնական խոսքերում, երբ անհրաժեշտ է լինում հանդիսավորություն հաղորդել ասվածին. սա մեծ մասամբ լինում է կոչերում, երբ կոչա-

կանները բազմանդամ են և խոսքի հույզը իրենց վրա են վերցնում. հակառակ դեպքում (այլ շարահասության պայմաններում) շունչը չէր բավարարի բազմանդամ կոչականն արտաբերելու համար. «Մամուլի, ռադիոյի, և հեռուստատեսության, հրատարակչությունների և կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատողներ, ակտիվորեն օգնեցե՛ք կու-սակցությանը աշխատավորներին դաստիարակելու մարքսիզմ-լենինիզմի, սովետական հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզ-մի ոգով (ՍՀ, ՍՄԿԿ Կենտկոմի կոչերից)»:

Նամականերում նույնպես կոչականը նախադաս է դրվում. «Հայրի՛կ ջան, ստացա նամակդ և անմիջապես պատասխանում եմ»:

Կոչականը անհրաժեշտաբար նախադասության սկզբում է, եթե խո-սողը ցանկանում է, որ իր խոսքը անպայման ուշադրության արժանանա, լսելի դառնա շրջապատի համար.

— Լիպարի՛տ Արամիչ, մենք բարձրագույնն ավարտած տղաներ ունենք՝ չորս-հինգ տարի է հարյուրից պակաս են ստանում (ԶԽ):

— Երեխանե՛ր, հաջորդ դասին շարադրություն ենք գրելու ազատ թեմա-յով, — հայտարարեց Մամյանը (Գարուն, 1978, 9):

Կոչականը մեծ մասամբ նախադաս է նաև այն դեպքում, երբ դրա միջոցով խոսողն արտահայտում է հանդիմանություն, զայրույթ, սպառ-նալիք, խնդրանք և այլն.

— Տիգրա՛ն, չի վարելի, տեղը դիր...: Վաճա՛ւմ, դու սպասիր, դեռ հե-տո պատասխան կտաս դրա համար: Հասմի՛կ, ներիք խնդրում եմ, այլևս չի կրկնվելու (նՁՀ):

Կրկնվող կոչականները նույնպես նախադաս են գործածվում.

Սաֆն՛, Սաֆն՛, մեզ մոտ արի,

Արի մեզ մոտ հարսանիք (ՀԹ.):

Օ, Դե՛ր-Ձո՛ր, Դե՛ր-Ձո՛ր, դու հայոց շիրիմ,

Առա՞ջ էլ արդյոք անապատ էիր... (Վ. Դավթյան):

Կոչականները սովորաբար նախադասության մեջտեղում են շարա-դասվում, երբ նախադասության որևէ անդամը կրկնվում է. դա լինում է հատկապես ստորոգյալի կրկնության դեպքում.

Քշիր, կառապա՛ն, քշիր, քշիր,

Տար մեզ աշխարհի աչքից հեռու (Ս. Կապուտիկյան),

Վարի, գութա՛ն ջան, վարի,

Շատ է դժժար էս տարի (ՀԹ):

Գնա, իմ խե՛ղճ գիրք, գնա մարդամեջ... (Խ. Աբովյան):

Կոչականները մեծ մասամբ նախադասության մեջտեղում են շարադասվում նաև այն դեպքում, երբ խոսակիցները տարածության մեջ իրար մոտիկ են գտնվում, և տեղի է ունենում հարց ու պատասխան.

Պատասխան տուր ինձ, մառնի՛չ սեաշյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն... (ՀԹ):

— Դուք իմ ինչի՞ն եք թվանշան դնելու, ուսուցի՛չ, իմ տառասխալներին, թե՛ անկեղծությանը (Գարուն, 1978, 9):

Կոչականը շարադասվում է հարցական և բացականչական բառերից հետո.

— Ձեզ ո՞վ կանչեց, Ընկե՛ր Մամյան (Գարուն, 1978, 9):

— Ի՞նչ է պատահել, Մարի, շատ ես տխուր (նույն տեղում):

Ինչքան լավացել ես, Մամբրե՛ ջան (ՎՊ ԴԱ):

Ողջույնի, հրաժեշտի, բարեմաղթությունների դեպքում կոչականները սովորաբար նախադասության վերջում են շարադասվում, իսկ երբեմն էլ՝ մեջտեղում.

Ողջույն քեզ, արե՛, ողջույն քեզ, գարո՛ւն...

Ողջույն ձեզ մութ ուղիներում երկնային,

Իմ եղբայրե՛ն, հեռունեքում ու բանտում (Վ. Տերյան):

— Բարի ճանապարհ, սիրելի՛ բարեկամներ...

Դեհ, մենք բարով, ծեղունի՛ հայրիկ (ՀԹ):

Կոչականը միջադաս կամ վերջադաս է լինում նաև այն դեպքում, երբ նախադասությունները սկսվում են այդ կամ ոչ պատասխանական բառերով.

— Սուրճ պատրաստե՞մ:

— Ոչ, Անահի՛տ, կարիք չկա (Ձե):

Անպայման կղանգահարես, լա՞վ:

— Այո, Կար՛են, համարդ չեմ մոռացել (ՎՊԴԱ):

Նրբ կոչականը կորցնում է գործնական նշանակությունը, կիրառվում է իբրև թարմատար, ձեռք է բերում միջանկյալ բառի արժեք, շարադասվում է նախադասության մեջտեղում կամ վերջում. Վլավ ես ասում, գավա՛կս, բայց ով է մեզ լսողը (ՍԳ, 1978, 10): Մի՞նչ եք ասում, ա՛յ մարդ, նա այդ ժամանակ այստեղ չի եղել: Մի հիմի դու գիտես, Գիֆո՛ր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղա ես դուրս գալի (ՀԹ, Գիքորը):

Եթե նախադասութիւններն սկսվում են որևէ ձայնարկութիւնով, շաղկապով, եղանակավորող բառով, բնականաբար կոշականները միջադաս կամ վերջադաս դիրք են ունենում:

Վայ, խեղճ տղաս, ոչ մի տեղդ չցավա՞ց (Ավ. Իս.):

Ահա՛ւասիկ, պարոն Օտյան, ձեզի համար գործունեության գեղեցիկ ասպարեզ մը (Ե. Օտյան): Եվ դու, իմ ընթերցո՞ղ, հետևիր ինձ (ՎՓ):

Երբ նախադասության կազմում կան խրախուսական, հանդիմանական, աղաչական արտահայտութիւններ, կոշականները շարադասւում են դրանցից հետո:

Լսիր, տղա՛ս, ինձ կթաղես անհայտ մի տեղ աննշան,
Որ չիմանան, մարդիկ չգան՝ շիրմիս քարը գողանան (Ավ. Իս.):
Ամոթ քեզ, Մո՛սի, թուք ու նախատինք... (ՀԹ):

Կոշականները պարտադիր կարգով վերջադաս են, երբ հանդես են գալիս էպիֆորի ոճական դերում:

Մարդիկ են փուչ ու բեղամաղ-աշխարհը լին,
լավ է, Չարե՛նց,
Մարդու խոսքը մարդու սրտին անհանգչելի
ցավ է, Չարե՛նց,
Ականջ արա ազդու խոսքիս՝ ասում եմ, թե
բավ է, Չարե՛նց... (Ե. Չարենց):

ԿՈՉՍԿԱՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե հնչերանգը բանավոր խոսքի ճիշտ արտաբերման հիմնական միջոցն է, որի շնորհիվ խոսքը օժտվում է արտահայտչական ամենաբազմազան առանձնահատկութիւններով, ապա այդ նույն դերը գրավոր խոսքում կատարում է կետադրութիւնը: Ահա թե ինչու մեծ գրող ու հոգեբան Անտոն Չխտովը կետադրության նշանները համարում է գրավոր խոսքի նոտաներ:

Ինչպես շարահյուսական շատ իրողութիւններ (նախադասության համադր անդամներ, տրոհվող լրացումներ և այլն), այնպես էլ կոշականներն ունեն իրենց առանձնահատուկ կետադրութիւնը:

Ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը շատ համոզիչ կերպով և բազմաթիվ օրինակներով ապացուցում է, որ կետադրական նշանները պայմանավորված են շարահյուսական իմաստներով: Նա իր «Հայոց լեզվի վիակատար քերականութեան» Ծ-րդ հատորի «Ռիթմ և դադար» և «Կետադրութիւն» գլուխներում բերում է կետադրական նշանների բնա-

խոսական, հոգեբանական, տրամաբանական և բերականական գործոնները: Այս բաժիններում մեծ լեզվաբանը գիտականորեն հիմնավորում է, թե որ դեպքում պետք է վերջակետ դնել, որ դեպքում՝ միջակետ, որ դեպքում՝ ստորակետ ու բուլբ և այլն: Ստորակետի գործածության վերաբերյալ նա գրում է. «Ստորակետը դրվում է, երբ ձայնը կամաց-կամաց բարձրանում է, բայց ոչ բուլբի շարժի և մի տեսակ քարշ է գալիս, երկարում»¹: Այնուհետև նա բերում է ստորակետի գործածության դեպքերը, որոնց թվում նշում է նաև կոշականը. «Ստորակետը դրվում է կոշականի մոտ, նախադասության թե սկիզբը, թե մեջը և թե վերջը»²:

Մենք վկայակոչում ենք մեծ լեզվաբանին, որպեսզի ցույց տանք, որ կոշականը հայերենում ունի միայն մեկ տեսակի կետադրություն. այն է՝ ստորակետը, մինչդեռ մեր գրավոր խոսքում, չգիտես ինչ պատճառաբանությամբ կամ ինչ հիմնավորումով է կոշականներից հետո վերջակետ, միջակետ, ստորակետ-գծիկ դրվում:

Վերջակետ կամ բաղմակետ պետք է դնել միայն այն կոշականներից հետո, որոնք առանձին կոշական-անվանական նախադասություններ են (տես էջ 248, 268 և 273: Կիրակո՛ս:— Ձայն չկա:— Կիրակոս...):

Իսկ մամուլում բերված կոշերում կոշականներից հետո դրվող վերջակետերը բոլորովին չեն արդարացվում, որովհետև այդ կոշականները նախադասություններ չեն, հետևաբար պետք է տրոհվեն միայն ստորակետերով: Մամուլում տպագրվող կոշերում թե՛ միանգամ և թե՛ բաղմանգամ կոշականները տրոհվում են վերջակետով: Բերենք մեկական օրինակ. «Կոմունիստե՛ն: Եղեք ՍՄԿԿ 25-րդ համագումարի որոշումնե՛րի կատարման համար... մղվող համաժողովրդական պայքարի ավանգարդում» (ՍԶ, 1978, 14, 10, ՍՄԿԿ Կենտկոմի կոշերից): «Սովետական ռազմիկնե՛ր: Անդուլ կերպով կատարելագործեցեք ձեր մարտական ու բաղաճական պատրաստությունը» (նույն տեղում):

Մամուլը նման կոշականների կետադրությունը այնքան է ծայրահեղացնում, որ շատ հաճախ նույնիսկ նույն նախադասության մեջ եղած մեկից ավել կոշականները նույնպես իրարից վերջակետով է տրոհում.

Ընկեր զինվորներ և նավաստիներ, սերժանտներ և ավագներ:

Ընկեր պրպորշչիկներ և միշմաններ:

Ընկեր սպաներ, գեներալներ և ծովակալներ:

Սովետական զինված ուժերի ընկեր վետերաններ:

¹ Հր. Անտոյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, հ. 6, 1971, էջ 361:

² Նշվ. աշխ. էջ 362:

Այսօր սովետական ժողովուրդը և նրա ռազմիկները տոնում են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 61-րդ տարեդարձը (ՍՀ, 1978, 7):

Մեր հրատարակչությունները նույնպես միատեսակ մոտեցում չունեն կոշականների կետադրության հարցում: Բերենք մի քանի օրինակներ մամուլից և գրականությունից, որտեղ կոշականները ստորակետով չեն տրոհվել կամ միջադաս կոշականները միայն մեկ կոդից են տրոհվել:

Ներքի հայրի՛կ, որ տխուր բաներ եմ հիշում (ԳԹ, 1978, 17, 3):
Ա՛յ ժողովուրդ կարգին խնայեք (Բակունց): Կտեսնեք Մացա՛կ Ավագյան (ՆՁՀ): (Ստորակետները բաց են թողնված):

Նրբեմն էլ կոշականները, չգիտես ինչու, անջատվում են գծիկով, որը նույնպես սխալ է:

Բուժֆույրե՛ր-սպիտակ աղավնի համբերող... (Դեմ):
— Չեն մոռացել այդ էլ գրեւ-ստաճակե՛ր, խելագարե՛ն (Դարուն, 1978, 9):

Ավելի խայտաբղետ է այն կոշականների կետադրությունը, որոնք հանդես են գալիս ձայնարկությունների, դու, դուք և ով դերանունների հետ: Այսպիսի դեպքերում արդեն գրականության մեջ և մամուլում կոշականների կետադրության միօրինակություն չկա: Բավարարվենք միայն մի երկու օրինակով, որտեղ մի դեպքում ձայնարկությունները կոշականներից տրոհվում են, մի այլ դեպքում՝ ոչ: Այս բանը նկատելի է նույնիսկ նույն հեղինակի տարբեր դորժերում:

Է՛յ, ջա՛ն-հայրենի՛ք, Ինչքան սիրուն ես (Ավ. Իս.):

Է՛յ դու ջանե՛լ, հայա՛րտ հասակ,
Թուր ոսկի աստղի պես (Ավ. Իս.):

Է՛յ աստղե՛ր, աստղե՛ր, երկնի՛ աստղե՛ր... (ՀԹ):

Ա՛խ, Անո՛ւշ Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում... (ՀԹ):

Ահա մի երկու օրինակ վահագն Դավթյանի «Ասք սիրո և սրի» պոեմից, որտեղ առաջին տողում դու-ն չի տրոհվում, բայց երկրորդում տրոհվում է:

Ով դու նավասարդյան խարտյա՛շ արևադալ,

Նվ դու, նավասարդյան ծիրանի ծառ (Վ. Դավթյան):

Ժամանակակից գրական հայերենի կոշականի ընդունված, կայունացած և շարահյուսական իմաստներով պայմանավորված կետա-

դրությունը, որը լրիվ կերպով փոխարինում է նրա բանավոր խոսքի հնչերանգային բազմազանությունը, հետևյալն է՝

ա) կոշականը իր վերջին վանկի ձայնավորի վրա շեշտ է կրում, որը փոխարինում է բանավոր խոսքի հնչերանգի բարձրացող տոնայնությունը:

բ) կոշականը նախադասություն կազմող մյուս միավորներից անջատվում է ստորակետերով:

Եթե այն նախադասության սկզբում է, ստորակետը դրվում է նրանից հետո՝ «Պապի՛կ, քո պապը իր պապի մասին քեզ ի՞նչ է պատմել» (Հայր. ձայն):

Եթե նախադասության վերջում է, ստորակետը դրվում է նրանից առաջ՝ «Վերջին ուսուցիչ չի լինում, Լուսի՛կ» (Գարուն, 1978, 9):

Եթե միջադաս է, երկու կողմերից անջատվում է ստորակետերով՝ «Կանգնիր, ֆառավա՛նս, ինձի կթվա, թե հայրենիքես ինձ մարդ կկանչե» (Ավ. Իս.):

Կոշականը նախադասության մյուս միավորներից տրոհող ստորակետը փոխարինում է բանավոր խոսքի հնչերանգի կտրատվելուն (նախադաս կոշականից), հետո և վերջադասից առաջ, իսկ միջադասի դեպքում՝ երկու կողմերից, ձայնը հասնում է կտրվելու աստիճանի, ինչպես գրում է Աճառյանը, մի տեսակ ծորում է, հենց այդ ծորալու տեղերում էլ դրվում են ստորակետեր):

Սակայն, երբ կոշականների հետ հանդես են գալիս նախադաս ուրուշի՜ կամ հատկացուցիչ լրացումներ, այդ դեպքում կոշականի և նրա լրացման միջև ձայնային դադար չի լինում և ավելի բարձր հնչերանգով արտաբերվում է ոչ թե կոշականը, այլ նրա լրացումը, այդ պատճառով էլ շեշտը կոշականից անցնում է լրացման վրա, և նրանք իրարից ստորակետով չեն տրոհվում:

Սիրո՛ւն գարուն, կանա՛չ գարուն,

Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ (Ալ. Մատուրյան):

Սիրելի՛ Վիլյամ Սառոյան, այս դահլիճում հավաքվել է քո տաղանդի երկրպագուների շատ փոքրիկ մասը միայն (Հայրենիքի ձայն):

Մանիք, մանիք, ի՛մ ճախարակ (Ղ. Աղայան):

Իսկ եթե կոշականն ունենում է որոշիչ և հատկացուցիչ լրացումներ, հատկացուցիչը դրվում է որոշիչից առաջ և շեշտ չի ընդունում, շեշտը մնում է որոշիչի վրա. այդ եռանդամ կապակցությունը արտաբերվում է առանց ձայնային կտրվածության, միայն որոշիչը արտաբերվում է ավելի բարձր հնչերանգով:

Քեզ մոտ եմ գալիս իմ հի՛ն տրամուրջուն (ՀԹ),
հաղադուծյուն ձեզ, մեր անբա՛խտ պապեր... (ՀԹ),
Ինչպե՞ս շփրեմ քեզ, իմ անգի՛ն լեզու (Դեմ):

Իսկ երբ կոշականների լրացումները վերջադաս են, այդ դեպքում նորից լրացում-լրացյալները իրարից չեն տրոհվում, սակայն այդ դեպքում շեշտը չի անցնում լրացման վրա, այլ այն կրում է կոշականը.

Անցիր, սև՛ ամպ, դու իմ սրտից,
Բացվիր, երկի՛նք կապուտակ,
Տխուր, խավար թուփալի միջից
Ցուր, գարնա՛ն արեգակ (Հ. Հովհաննիսյան):

Առաջին և շորորոր տողերում լրացումները նախադաս են և շեշտված, իսկ երկրորդ տողում՝ հտադաս է և անշեշտ:

Բազմանգամ կոշական կապակցության մեջ նույնպես լրացում-լրացյալները չեն տրոհվում. «Բիթլիսցի Թագուհու և Արմենակի գավակ վիլլա՛մ Սարոյան, քո սիրտը լեռներում է» (Հայրենիքի ձայն):

Եթե այդպիսի կառուցվածքում կան համապուր, համադաս լրացումներ, դրանք են միայն իրարից տրոհվում.

Լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ, Սև ջրի՛ չորա՛ն, սար ու ձոր մղկտացնող ջիվան, գաղան մեղմացնող, քար ու ծառ հուզող շորա՛ն... (Վ. Փափազյան):

Նախադասության մեջ մի քանի կոշականներ հանդես գալու դեպքում դրանք իրարից տրոհվում են ստորակետերով, և յուրաքանչյուր կոշական իր վրա շեշտ է կրում, իսկ եթե կոշականներն ունենում են նախադաս լրացումներ, շեշտը անցնում է լրացումների վրա.

— Սիրելի՛ հայրենակիցներ, սիրելի՛ բարեկամներ,— ասաց Վիլլամ Սարոյանը,— այսօր իմ կյանքի մեծագույն օրերից մեկն է (Հայրենիքի ձայն):

Դարդս լացեք, սարի՛ սմբուլ,
Ալվա՛ն-ալվա՛ն ծաղիկներ,
Դարդս լացեք, բաղի՛ բլբուլ,
Ամպշող երկնուց գո՛վ հովեր (Ավ. Իս.):

Ավելի բարդ է ձայնարկությունների հետ հանդես եկող կոշականների կետադրության հարցը: Ինչպես տեսանք վերևում, այս հարցում միասնական մոտեցում չկա. մի դեպքում կոշականը տրոհում են ձայնարկությունից, մյուս դեպքում՝ ոչ:

Ինչպես հայտնի է, կոշականների հետ ոչ բոլոր ձայնարկություններն են հանդես գալիս. կոշականների հետ հիմնականում գործածվում են կոշական ձայնարկությունները (ա՛յ, է՛յ, հե՛յ, ո՛վ, տո՛ժ, ջա՛ն)³ և բացականչական ձայնարկություններից մի քանիսը (ա՛խ, ամա՛ն, է՛, է՛հ, վա՛խ, վա՛յ, օ՛ և այլն):

Մեր բազմազան ուսումնասիրությունները մեզ բերեցին այն եզրակացության, որ կոշականների և ձայնարկությունների միասնաբար հանդես գալու դեպքում դրանց կետադրության հարցերը վճռելիս պետք է ղեկավարվել հետևյալ սկզբունքով.

ա) Եթե կոշականները հանդես են գալիս կոշական ձայնարկությունների հետ, ապա դրանք չեն տրոհվում: Պատճառն այն է, որ այս ձայնարկությունները բարձր հնչերանգով, ուժգնությամբ չեն արտաբերվում և գրության ժամանակ, ի տարբերություն բացականչական ձայնարկությունների (որոնք կրում են բացականչական նշան), շեշտ են կրում.

Ա՛յ պա՛ղ ջրե՛ր, զուլա՛լ ջրե՛ր,

Որ գալիս եք սարերից... (ՀԹ):

Ա՛յ սառե՛ր, ջա՛ն սառե՛ր, Ալմաստի սառե՛ր... (Ավ. Իս.):

Է՛յ Մանթաշի երազ հովիտ... (Ավ. Իս.):

Է՛յ հի՛ն ծանոթներ, Է՛յ կանաչ սառե՛ր... (ՀԹ):

Հե՛յ ուլատե՛ր, հե՛յ գառնատե՛ր,

Ելե՛ք շուտով բացե՛ք դռներ (ՀԹ):

Ով կոշական ձայնարկությունը կարող է հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ դու դերանվան հետ. երկու դեպքում էլ չի տրոհվում.⁴

Ներե՛ր, ո՛վ կույս, որ հուզեցի

Խաղաղ կուրծքդ կուսական (ՀԹ):

Ո՛վ դու միամիտ: Բայց երկնքի վկա (ՀԹ):

Ո՛վ դու իմաստուն, քեզ եմ դիմում (Ավ. Իս.):

3 Էյ-ը, երբ հանդես է գալիս որպես բացականչական ձայնարկություն, անպայման տրոհվում է և կրում է բացականչական նշան.

Է՛յ, եավավա՛ր, ինչ ես անում,

Ո՛ր ես նստում դու նավակ (Ա. Մատուրյան):

4 Բարբառային կոշական ձայնարկություններ են նաև առա, ծո, տո, ադա, գյա, գյադա, որոնք ավելի հաճախ բանավոր խոսքում հանդես են գալիս որպես կոշականներ (Առա, դեա էստեղից: Մո, արի բան ասեմ: Գյադա, հեռացիր...), իսկ որպես ձայնարկություն հանդես գալիս չեն տրոհվում (Արա Գագո, արի էստեղ: Գյադա Համբո, խի ես եկել: Մո հաշո, ինչ կես...):

բ) Եթե կոշականը հանդես է գալիս բացականչական ձայնարկությունների հետ, այդ դեպքում անպայման նրանից անջատվում է ստորակետով, որովհետև բացականչական ձայնարկությունները խոսքին տալիս են արտահայտչական բնույթ և արտաբերվում են բարձրացող հնչերանգով, կրում են բացականչական նշան և իրենցից հետո պահանջում են տեական դադար.

Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անասովա՛ծ Անո՛ւշ...

Արբեցա՛ծ, անո՛ւժ... (ՀԹ):

Ամա՛ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան փապեր (ՀԹ):

է՛, է՛, ժողովուրդ, հավաքվեք, որ պատասխան տաք (ԴԴՎ):

Հե՛յ, հե՛յ, հե՛յ, Եգոր, հե՛յ,— դմբդմբալով պատեպատ գնում է նրա կանչի արձագանքը (Բակունց): Վո՛ւյ, վո՛ւյ, նաե՛ի՛, պոչը ծաղիկ ա,— կանչեց Սաքանի տղան (Բակունց):

— Վա՛խ, վա՛խ, իմ անմե՛ղ ոչխար,— մղկտաց Հանոն (Վ. Փափազյան):

Ջան կոշական ձայնարկությունը առատորեն է գործածվում կոշականների հետ (տե՛ս էջ 254, 261) և մեծ մասամբ լինում է ետադաս, բայց երբեմն էլ այն հանդես է գալիս նաև որպես բացականչական ձայնարկություն, այս անգամ անպայման լինում է նախադաս և տրոհվում է.

Ջա՛ն, հայրենի՛ աճառներ,

Դուք եք կանչում ինձ ձեր քով (ՀԹ):

Պետու ահանջին հասավ կովի բառաչի ձայնը.

— Ջա՛ն, Մարա՛լ, սոված ես մնացել,— ասաց ինքն իրեն (Բակունց):

Երբեմն էլ ջան-ը միանում է այլ ձայնարկությունների հետ (հե՛յ ջա՛ն, ա՛յ ջան, է՛յ ջան) և կոշականներից չի տրոհվում.

Ա՛յ ջան տղա, չորա՛ն տղա, ո՞ւմն ես դու (ՀԹ):

Հե՛յ ջան տղերք, ուժ տվեք... (ՀԹ):

Եվ վերջապես, հետաքրքրական կիրառություն ունեն այն կոշականները, որոնք հանդես են գալիս դու և դուք անձնական դերանունների հետ: Այս դեպքում նույնպես պետք է տարբերակել երկու հանգամանք՝ ա) եթե դերանունները կոշականների հետ գործածվելիս հանդես են գալիս որպես նախադասության ենթականեր, այդ դեպքում կոշականներից անջատվում են ստորակետով.

Դու էլ, սե՛ր իմ, հարություն առ... (ՀԹ):

էյ դու, ջանե՛լ, հպարտ հասակ,

Թռար ոսկի աստղի պես... (Ավ. Իս.):

էյ դուք, Ռոկֆելլեր, Ստինենս, Մորգան... (Չարենց):

— Լիպարիտ Արամի՛չ, դուք վաղուց էիք կարգադրել, իսկ դու, Մարտի՛ն, ինձ տեղյակ չէիր պահել (Ջե):

բ) Իսկ եթե այդ նույն դերանունները հանդես են գալիս կոչականների հետ որպես մի տեսակ թարմատար կոչականներ (տե՛ս էջ 255—256) այդ դեպքում չեն տրոհվում:

Մո՛վ դու ժպտուն, հրաշատեսիլ կապույտ,

Աջքերս ի քեզ հառած մնամ ժամերով (Մկրտիչ Աճեմյան):

Դու ճի՛ն երկիր, նոր ու պայծառ,

Իմ ժողովուրդ, իմ հաց (Ավ. Իս.):

Այսպիսով, կոչականների կետադրությունը պայմանավորված է ինչպես նրանց շարահյուսական ու ձևաբանական դանազան գործոններով, այնպես էլ հնչերանգով ու շարադասությամբ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ—Ակսել Բակունց, Երկիր, հ. 1, 1976

Ավ. Իս.—Ավետիք Խաճակյան, Ընտիր Երկիր, Երևան-Մոսկվա, 1948

Ավ.—Ավանգարդ, լրագիր, 1977—78

ԳԹ—Գրական թերթ, լրագիր, 1978—79

ԳՔԾ—Կեդր. քրիստիյան, Շաղանակենի, 1979

ԴԴ—Դ. Դեմիրճյան, Վարդանանք, 1951

Ջե— Ջորայր Խալափյան, Եվ վերագրանելով ձեր դիմանկարը, 1978

ՄՀԶ—«Մարգարիտներ հայ քնարերգության», հ. Ա, 1971

ՀԹ—Հովհ. Քոմանյան, Երկրի ժողովածու, հ. 1, 2, 1969

ՀՄՄ— Հրանտ Մաթևոսյան, Մառերը, 1978

ՆՋՀ—Նաիրի Զարյան, Հացավան, 1977

ՇՊՀ—Շիրվանզադե, Պատվի համար, 1956

ՍՀ—Սովետական Հայաստան, օրաթերթ, 1978—79

Սով. արվ.— Սովետական արվեստ, ամսագիր, 1976—79

ՍԳ—Սովետական գրականություն, ամսագիր, 1976—79

Սով. դպ.— Սովետական դպրոց, լրագիր, 1978—79

ՎՊԴԱ—Վարդես Պետրոսյան, Դեղատուն Անի, 1973